2025, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (689)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում
Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 26-րդ տարեդարձի առիթով



Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 26-րդ տարեդարձի առիթով Սուրբ Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք: Ընկալյալ կարգի համաձայն՝ հավատացելոց երկրպագության համար դուրս էր բերվել նաև Սկևռայի սրբոց մասանց պահարանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և ուխտավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Պատարագիչ Սրբազանն իր քարոզում շնորհավորեց Հայոց Հովվապետին օծման ու գահակալության տարեդարձի կապակցությամբ և անդրադարձավ Վեհափառ Հայրապետի հոգևոր, մշակութային, կրթական ու եկեղեցաշեն գործունեությանն ու մեծաթիվ ձեռքբերումներին՝ մաղթելով անսասան հովվապետություն՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի և ի զորացումն հայրենիքի:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 26-րդ տարեդարձի առիթով Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ հանդիսապետությամբ Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի:

Ներկաներն աղոթք բարձրացրին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության, ինչպես նաև Նորին Սրբության քաջառողջության, կենաց արևշատության և բազմամյա գահակալության համար:

Ավարտվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Նոյեմբերի 4–7-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ժողովի սկզբում ԳՀԽ անդամներն աղոթեցին Մայր Աթոռի միաբան նորոգ հանգուցյալ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանի հոգու հանգստության համար:

Նիստերը վարեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը:

Տ. Միքայել արք. Աջապահյանի, Տ. Բագրատ արք. Գալստանյանի, Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանի, Տ. Գարեգին քհն. Արսենյանի, ազգային բարերար Սամվել Կարապետյանի և ապօրինաբար ազատազրկված մյուս հայորդիների նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթների, իրականացված դատավարական գործողությունների, կայացված դատավճռի, դրանց իրավական անհիմն և խտրական բնույթի, միջազգային հարթակներում Եկեղեցու ու եկեղեցականների իրավունքների պաշտպանության, ազատ խոսքի և այլախոհության նկատմամբ անհանդուրժողականության ու տեղեկատվական դաշտում Եկեղեցուն և եկեղեցականներին թիրախավորելու հաճախացող դեպքերի մասին զեկույցներով հանդես եկան ի. գ. թ. Արա Զոհրաբյանը, իրավաբան, միջազգային փորձագետ Արա Ղազարյանը, փաստաբաններ Արամ Վարդևանյանը, Հովհաննես Խուդոյանը և ի. գ. թ. Արման Թաթոյանը:

Գերագույն հոգևոր խորհուրդը խստորեն դատապարտեց Եկեղեցու և եկեղեցականների իրավունքների նկատմամբ իրականացվող բացահայտ ապօրինի ոտնձգություններն ու ճնշումները, ինչպես նաև հակաեկեղեցական հռետորաբանությամբ ատելության խոսքի ու անհանդուրժողականության տարածումը՝ ընդգծելով, որ նման երևույթները խաթարում են ինչպես խղճի ու խոսքի ազատության սկզբունքը, այնպես էլ հանրային համերաշխությունը: Արձանագրվեց նաև, որ եկեղեցականներին առաջադրված մեղադրանքներն ու խափանման միջոցները հիմնված են ոչ իրավաչափ փաստերի վրա և հակասում են արդար դատաքննության իրավունքի և անձի ազատության սահմանափակման միջազգային չափանիշներին:

Խորհուրդը վերահաստատեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը՝ աջակցել արդարադատության հաստատմանը և պաշտպանել Եկեղեցու սպասավորների ու հավատացյալ ժողովրդի իրավունքները՝ վերստին կոչ անելով իրավապահ մարմիններին հանուն արդարության դադարեցնել ապօրինի քրեական վարույթները և ազատ արձակել ազատազրկված հոգևորականներին ու քաղաքացիական անձանց: Անհրաժեշտ նկատվեցին նաև Հովհաննավանքի նկատմամբ Մայր Աթոռի իրավունքների և ծիսաարարողական կյանքի վերականգնմանը, հավատացյալների հոգևոր-կանոնական կյանքի պաշտպանությանն ու եկեղեցականների բնականոն ծառայության ապահովմանն ուղղված քայլերը:

Բաքվում պահվող զինվորական և քաղաքացիական անձանց նկատմամբ իրականացվող դատական գործընթացների, արցախահայերի իրավունքների պաշտպանության մասին զեկուցեց իրավաբան Արա Ղազարյանը: Ներկայացվեցին Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտման աղաղակող դեպքերը, ընդգծվեց, որ իրականացվող, այսպես կոչված, դատավարությունները որևէ կապ չունեն արդարադատության հետ և հակասում են միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար դրույթներին:

Բանախոսը կարևորեց ինչպես Եկեղեցու և միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի իրավապաշտպան մարմինների միջոցով գերիների ազատ արձակմանն ուղղված իրավական քայլերի իրականացումը:

Գերագույն հոգևոր խորհուրդն ընդգծեց գերիների հարցի նկատմամբ շարունակական ուշադրության և համակարգված քայլերի անհրաժեշտությունը: Վերահաստատվեց Եկեղեցու պատրաստակամությունը՝ շարունակելու ջանքերը Քույր Եկեղեցիների ու միջազգային կրոնական կառույցների հետ համագործակցությամբ նպաստելու գերիների վերադարձին և մարդու իրավունքների պաշտպանության օրինական մեխանիզմների կիրառմանը:

Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունների մասին զեկուցեց ԳՀԽ անդամ, ի. գ. դ. Գևորգ Դանիելյանը՝ ներկայացնելով փաստեր, որոնք վկայում են Ադրբեջանի կողմից իրականացվող համակարգված քաղաքականության մասին՝ միտված հայկական պատմամշակութային արժեքների ոչնչացմանը և յուրացմանը: Նշվեց, որ ադրբեջանական իշխանության կողմից հովանավորվող պատմական զեղծարարության նպատակն է ջնջել տարածաշրջանի հայկական ինքնության հետքերը և փորձել օրինականացնել իրենց հավակնությունները հայկական ժառանգության նկատմամբ:

ԳՀԽ-ն կարևորեց միջազգային ամենալայն շրջանակների աջակցության ապահովումը և մասնավորաբար Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ Եկեղեցու կողմից իրականացվող աշխատանքների առավել ընդլայնումը:

Պ. գ. թ., դոցենտ Միքայել Մալխասյանն իր զեկույցում անդրադարձավ հանրակրթական ծրագրերում և Հայոց պատմության դասագրքերում տեղ գտած մտահոգիչ դրույթներին: ➥ էջ 2

Ավարտվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

↩ էջ 1

Բանախոսը ներկայացրեց օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են աղճատվում Հայոց պատմության տարբեր փաստերը և խեղաթյուրվում իրադարձությունները՝ նսեմացնելով պատմական դեմքերի ու դեպքերի, եկեղեցական և պետական գործիչների պատմական դերը: Գերագույն հոգևոր խորհուրդը խիստ մտահոգությամբ նկատեց, որ նման մոտեցումները վտանգում են սերունդների ազգային ինքնության և պատմական հիշողության շարունակականությունը՝ կարևորելով ազգային խորհրդանիշների արժևորման և դրանց հանդեպ հարգանքի ու պատշաճ վերաբերմունքի ձևավորման անհրաժեշտությունը, նաև ընդգծելով Եկեղեցու առաքելությունը ժողովրդի ազգային ինքնության, պատմական հիշողության և հոգևոր արժեքների պահպանման գործում:

ԳՀԽ-ն քննարկեց և որոշեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի վախճանման 1700-ամյակին նվիրված հոգևոր, մշակութային միջոցառումների կազմակերպման և Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցի քննության նպատակով ձևավորել հանձնախմբեր:

Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին նաև Եկեղեցու հովվական կյանքին, կարգապահական ու իրավական խնդիրներին և Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող հարցեր:

Ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության և գնահատանքի խոսքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի Հանրապետության օրենսդիր մարմնի ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արգենտինայի Հանրապետության օրենսդիր մարմնի ներկայացուցիչներին:

Հանդիպմանը սենատոր Խուան Կառլոս Ռոմերոն Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ պատվիրակությունն այցելել է Հայաստան՝ զորացնելու հայ-արգենտինական կապերը, ինչպես նաև ծանոթանալու հայկական հոգևոր, մշակութային ժառանգությանը, Հայ Եկեղեցու պատմությանն ու գործունեությանը:

Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով ներկաներին, անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ հայ ժողովրդի կյանքում կարևոր դերակատարությանը՝ հոգևոր, մշակութային արժեքների, ազգային ինքնության կերտման և ազգապահպան առաքելությանը: Խոսելով երկու երկրների սերտ հարաբերությունների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ դժվարին իրավիճակներում՝ հատկապես արցախյան պատերազմի ընթացքում, Արգենտինան մշտապես զորակից է եղել հայ ժողովրդին: Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձավ նաև հայ համայնքի նկատմամբ Արգենտինայի իշխանությունների հոգածու վերաբերմունքին, ինչպես և արգենտինահայերի կարևոր ներդրմանը երկրի զարգացման գործում:

Վերջում Նորին Սրբությունը բարի արդյունքներ մաղթեց պատվիրակության առաքելությանը՝ ի շահ երկու երկրների և ժողովուրդների բարօրության:

Ֆրիտյոֆ Նանսենին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Սուրբ Էջմիածին

Նոյեմբերի 5-ին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը Մայր Աթոռում ընդունեց «100 տարի անց. Ֆրիտյոֆ Նանսենի ոտնահետքերով» միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ նվիրված Ֆ. Նանսենի և նրա հանձնախմբի՝ Հայաստան այցելության 100-ամյակին:

Երևանի՝ Ֆ. Նանսենի թանգարանի տնօրեն տիար Ժորա Հակոբյանը, ներկայացնելով հյուրերին, Սրբազան Հորը տեղեկություններ փոխանցեց գիտաժողովի աշխատանքների և արձանագրված արդյունքների մասին:

Նաթան արքեպիսկոպոսը ողջունեց գիտաժողովի անցկացման նախաձեռնությունը՝ ներկաներին փոխանցելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները:

Անդրադառնալով հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական առաքելությանը՝ Սրբազան Հայրն ընդգծեց վերջինիս անուրանալի ավանդը ցեղասպանությունից փրկված հայ փախստականներին և որբացած երեխաներին ցուցաբերած խնամքի ու նրանց վերաբնակեցման գործում: Այս առնչությամբ Նաթան Սրբազանը ցավով արձանագրեց, որ Ֆ. Նանսենից հայրյուր տարի անց պատմությունը կրկնվեց. արցախահայությունը բռնի տեղահանվեց ու հայրենազրկվեց: Նաթան արքեպիսկոպոսը նշեց, որ այս իրականության հանդիման Նանսենի ոգին՝ իբրև համամարդկային խղճի ձայն և մարդասիրության ու արդարության խորհրդանիշ, մեր ժամանակների համար բարոյական ուղեցույց է՝ հաստատուն մնալու սիրո, կարեկցանքի և ճշմարտության ճանապարհին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Հնդկաստան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոյեմբերի 8-ին Հայրապետական այցով մեկնեց Հնդկաստան, ուր հանդիպումներ կունենա Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցու հոգաբարձուների, Հայոց Մարդասիրական ճեմարանի տնօրենության և ուսուցչական կազմի հետ ճեմարանի գործունեության առնչվող հարցերի շուրջ: Նորին Սրբությանն ուղեկցում են Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը, Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Վեհափառ Հայրապետի հանձնակատար Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Մինասյանը:

Կարգալույծ է հռչակվել Տ. Տարոն քահանա Հունանյանը

Նոյեմբերի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ ստորև ներկայացված հիմնավորումներով կարգալույծ է հռչակվել Տավուշի թեմի հոգևոր սպասավոր Տ. Տարոն քահանա Հունանյանը:

Տնօրենության համար հիմք են ծառայել Տավուշի թեմի առաջնորդական տեղապահի զեկուցագիրը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգևների շնորհման և կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունը, որով վերջինս՝

ա) Ինքնակամ լքել է իր ծառայության վայրը 2024 թվականի մայիս ամսից,

բ) Անտեսել է Տավուշի թեմի առաջնորդական տեղապահի հորդորներն ու հրահանգները և հարատևել կարգազանց ընթացքի մեջ,

գ) Մասնակցել է կարգազուրկ հռչակված Ստեփան Ասատրյանի կազմակերպած հակականոնական արարողությանը՝ մեղսակից դառնալով կարգալուծվածին,

դ) Հրապարակային ելույթներով ու հայտարարություններով վարկաբեկել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և ծառայակից եկեղեցականներին,

ե) Անարգալից վարքագիծ է դրսևորել եկեղեցական բարձրագույն իշխանության նկատմամբ և դրժել հնազանդության ուխտը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Վարդան Հունանյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Մայր Տաճարի զանգակատան ներքո ամփոփված երկու հայրապետները

Ալեքսանդր Բ Բյուզանդացու մահվան 270-րդ տարելիցի առիթով

Մայր Տաճարի զանգակատան ներքո ամփոփված են երկու Հայրապետներ, և երկուսն էլ կրում են Ալեքսանդր անունը. Ալեքսանդր Ա Ջուղայեցին թաղված է գլխավոր մուտքի հյուսիսային կողմում, իսկ Ալեքսանդր Բ Բյուզանդացին՝ հարավային:

Մայր Տաճարի զանգակատան շինարարական աշխատանքներն սկսվել են Փիլիպպոս Ա Աղբակեցի Կաթողիկոսի հայրապետության շրջանում՝ 1654 թ., սակայն 63 տարեկանում՝ 1655 թ. մարտի 25-ին, Հայրապետն անսպասելիորեն վախճանվում է՝ տեսնելով միայն առաջին հարկի ներքին կամարը: Հարկ է նշել, որ զանգակատան կառուցման աշխատանքները խոչընդոտում էր Երևանի Մահմուդ Ղուլի խանը, որն ուներ քրիստոնյաների նկատմամբ ընդգծված ատելություն: Սակայն Փիլիպպոս Կաթողիկոսը, առանց ունենալու խանի համաձայնությունը, նախաձեռնում է շինարարական աշխատանքներ:

Փիլիպպոս Կաթողիկոսի մահվանից հետո Մայր Աթոռի ողջ միաբանությունը ցանկանում էր նրա մարմինն ամփոփել «ի դրան Սրբոյ Էջմիածնի, ի մեջ իւր շինեալ զանգակատանն», բայց խանը Կաթողիկոսի մահվանից հետո էլ շարունակեց հակառակությունը, քանի որ առանց իր համաձայնության էր նախաձեռնել շինարարական աշխատանքները (Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 2487): Մահվանից վեց օր անց՝ մարտի 31-ին, որևէ կերպ չկարողանալով համաձայնություն ձեռք բերել՝ միաբանները վճռեցին Վեհափառի մարմինը մեծաշուք թափորով փոխադրել Սուրբ Հռիփսիմե վանք՝ այնտեղ ամփոփելով այն...

Ալեքսանդր Ա Ջուղայեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվել 1706 թ. սեպտեմբերին՝ հաջորդելով Նահապետ Ա Եդեսացի Կաթողիկոսին, որի վախճանվելուց հետո Հայոց հայրապետական գահը թափուր էր մնացել շուրջ մեկ տարի: Նորընտիր հայրապետի կաթողիկոսական օծումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ նույն թվականի դեկտեմբերի յոթին:

Ալեքսանդր Ա Կաթողիկոսի մասին տեղեկությունները խիստ սակավ են: Ծնվել է Նոր Ջուղայում, կրթությունը ևս ստացել է այնտեղ՝ աշակերտելով Դավիթ Ջուղայեցուն: Եղել է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի միաբան, վանահայր, պարսկահայոց առաջնորդ, ինչպես նաև դասավանդել է Նոր Ջուղայի վանական դպրոցում:

Սիմեոն Ա Երևանցի Հայրապետը դրվատանքի խոսքերով է բնութագրում Ալեքսանդր Ա-ին. «Սա էր այր վանական և տեղեակ Աստուածաշունչ գրոց, հանճարեղ և շինարար, որ զբազում հնացեալ շինուածս Սրբոյ Աթոռոյս նորոգեաց» (Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան, 2022, էջ 71): Ալեքսանդր Ա Կաթողիկոսի օրոք Մայրավանքում շինարարական աշխատանքներ են կատարվել, կառուցվել է Մայր Աթոռի ձմեռային սեղանատունը: Տարբեր միջոցներով՝ եկեղեցական զարդերով, հարակից կահավորանքով, ինչպես նաև անասուններով, համալրվել է Մայր Աթոռի ունեցվածքը: Մայր Աթոռի բուն այգին, որ գտնվում էր Սուրբ Հռիփսիմե վանքի շրջակայքում, բոլորեքյան ընդլայնվել և պարսպապատվել է (Ջամբռ, էջ 71):

Ալեքսանդր Ա Ջուղայեցին Հայ Եկեղեցու ուղղափառության ջերմ պաշտպան է եղել: Նրա կարևոր քայլերից էր Հռոմի Կղեմես ԺԱ պապին ուղղված նամակը: Նամակը գրվել է 1709 թ. փետրվարի 25-ին: Նամակի դրդապատճառը լատին քարոզիչների առաջ բերած հուզումներն էին Օսմանյան կայսրությունում ապրող հայության տարբեր հատվածներում:

Լատին միսոներների պառակտիչ քայլերը զսպելու համար Ալեքսանդր Կաթողիկոսը վճռեց նամակով դիմել Հռոմի պապին:

➥ էջ 8

Հոգևորականի և հոգեբանի դերը մարդու կյանքում

Հարցազրույց Տեր Մանուկ քահանա Զեյնալյանի և հոգեբան Գագիկ Պետրոսյանի հետ

— Տեր Հայր, ո՞րն է հոգևոր առաջնորդի հիմնական դերը մարդու կյանքում: Ի՞նչ է տալիս մարդուն հավատը, որ հոգեբանությունը չի կարող տալ:

— Հոգևոր առաջնորդները Աստծո և մարդկանց միջև կենդանի հաղորդակցության միջնորդներն են՝ օգնելու, որ մարդը ճանաչի իր մեղքը, չհուսահատվի, այլ գտնի Աստծուց ներում հայցելու ճանապարհը: Թե՛ հոգեբանի, թե՛ հոգևորականի ծառայությունը կարևոր է, բայց նրանց նպատակը տարբեր է: Հավատքը մարդուն տանում է դեպի հոգևոր նորոգում, մինչդեռ հոգեբանությունը՝ դեպի ներքին աշխարհի հաշտություն: Հոգեբանի օգնությամբ մարդը կարող է հանգստանալ և խաղաղվել մարմնապես, մտովի, իսկ հավատքով՝ արժանանալ հոգու փրկության:

— Պարո՛ն Պետրոսյան, ո՞ր դեպքում մարդը պետք է դիմի հոգեբանին, ո՞ր դեպքում՝ հոգևորականին: Անձնային ո՞ր խնդիրներն են դուրս հոգեբանության և հոգեբուժության սահմաններից, որ կարող են լուծվել միայն հոգևոր դաշտում:

— Ժամանակակից հոգեբանությունը իրարից էականորեն տարբերվող բազմաթիվ տեսությունների և դրանց վրա հիմնվող հոգեթերապիական ուղղությունների մի ամբողջություն է: Չնայած այն հանգամանքին, որ այդ բազմազանությունը երբեմն առաջ է բերում որոշակի դժվարություններ, այդուհանդերձ՝ այն ունի նաև դրական կողմ. անձնային խնդիրների ամբողջ շրջանակը՝ հոգեմարմնական խնդիրներից մինչև գոյաբանական հիմնահարցեր, ըստ էության, ենթակա են հոգեթերաապիական ազդեցության: Հետևաբար՝ կարելի է որոշակի համոզվածությամբ ասել, որ հոգեբանությունը ներառում է հայտնի և դասակարգված անձնային բոլոր խնդիրները: Սակայն, ինչպես վերևում նշվեց, արդի հոգեբանությունը կազմված է հակասող, երբեմն նույնիսկ իրարամերժ տեսություններից, ինչը կարող է նշանակել, որ գործունեության ընթացքում բժիշկ-հոգեբանը կամ հոգեթերապևտն ստիպված է հենվել որոշակի տեսությամբ առաջարկվող մասնավոր կանխադրույթների վրա: Ուստի, հոգեթերապևտի աշխատանքը չի կարող ընդգրկել մարդկային էության բոլոր շերտերը: Հոգևորականի աշխատանքը, այս առումով, առավել արդյունավետ է, քանի որ հնարավոր չէ պատկերացնել մարդու կենսագործունեության որևէ կողմ, որը չի առնչվում հոգևորականի գործունեության հիմք հանդիսացող ուսմունքին կամ վարդապետությանը: Ասվածից պարզ է դառնում, որ անձնային խնդիրների լուծման հարցում հոգեբանի և հոգևորականի տարբերությունը պայմանավորված է ոչ այնքան լուծում պահանջող խնդրի բնույթով, որքան այն կանխադրույթներով, որոնցով ուղղորդվում է լուծման գործընթացը:

— Պարո՛ն Պետրոսյան, հին ժամանակներում հոգին և հոգեկանը նույնացվում էին, ժամանակակից հոգեբանական գիտության տեսանկյունից ի՞նչ է հոգին, և արդյոք այն կարելի՞ է նույնացնել հոգեկանի հետ:

— 19-րդ դարավերջին, ենթարկվելով գիտականացման պահանջին, ավանդաբար հոգու մասին գիտություն համարվող հոգեբանությունը հրաժարվեց հոգուց: Գիտական աշխարհայացքի շրջանակներում հոգին չէր կարող դիտարկվել որպես որոշակի հատկություններ ու ընդունակություններ ունեցող էություն կամ նախահիմք: Սա կհակասեր գիտության մեթոդաբանական կանխադրույթներին, քանի որ հոգին՝ որպես էություն, չէր ենթարկվում գիտական մեթոդներով իրականացվող որևէ հետազոտության: Գիտական հոգեբանությունն ընդհանուր առմամբ ուսումնասիրում էր մարմնի՝ մասնավորապես նյարդային համակարգի ոչ նյութական, հոգեկան դրսևորումները: Հոգին փոխարինվում է հոգեկանով, որն ածանցվում է նյարդային համակարգում ընթացող կենսաֆիզիկական և կենսաքիմիական գործընթացներից՝ հանդես գալով որպես երկրորդական երևույթ, էպիֆենոմեն: Հոգեկան հատկություններն ու ընդունակությունները զրկվում են իրենց էութենական նախահիմքից՝ հոգուց: Այս վերափոխումը, սակայն, ինչ-որ չափով դարձելի էր, և 20-րդ դարում ի հայտ եկան հոգեբանական հայեցակարգեր, որոնք որպես առարկա ունեին հենց հոգին: Կարող ենք հիշատակել Կառլ Գուստավ Յունգի վերլուծական հոգեբանական հայեցակարգը, որտեղ հոգին հանդես է գալիս որպես գործուն էություն: Չնայած այսպիսի հայեցակարգերի սակավությանը՝ դրանք զգալիորեն ազդեցին հոգեբանության ընդհանուր պատկերի ձևավորման վրա, և մեր օրերի հոգեբանությունը տարածվում է ծայրահեղ էպիֆենոմենալիզմից, որտեղ հոգեկանը դիտարկվում է որպես մարմնականից ածանցվող ոչ ինքնուրույն երևույթ, մինչև ընդգծված ոգեդավանություն (սպիրիտուալիզմ), որտեղ հոգին հանդես է գալիս որպես ինքնուրույն էություն, հոգեկան դրսևորումների նախահիմք:

— Տեր Մանուկ, որքանո՞վ է հոգևորականի գործունեությունը նման հոգեբանի աշխատանքին. երկուսն էլ ուղղված են անձնային խնդիրների լուծմանը և մարդու ներքին խաղաղության ապահովմանը, բայց տարբեր մեթոդներով: Դրանք կարո՞ղ են համատեղվել, թե՞ հակադիր են միմյանց:

— Հոգևորականը մարդու կյանքում Աստծո ճանապարհի ուղեցույցն է, նա մարդուն օգնում է ապրել հավատքով, բարի վարքով, ներքին խաղաղությամբ, Տիրոջով: Հավատքը մարդուն տալիս է այն, ինչ հոգեբանը չի կարող տալ՝ արդարանալու հույս և հավերժ ապրելու հոգևոր կյանք:

— Պարո՛ն Պետրոսյան, առանց հոգևոր կյանքի՝ մարդը կարո՞ղ է արդյոք լիովին ապաքինվել հոգեբանական վնասվածքից:

— Հարցի պատասխանը կախված է նրանից, թե ինչ ենք հասկանում՝ լիովին ապաքինվել ասելով: Եթե խոսքը վնասվածքածին իրավիճակից հետո հոգեթերապիական միջամտությամբ կենսագործունեության բնականոն ընթացքին վերադառնալու մասին է, ապա՝ այո՛, կարող է: Ժամանակակից հոգեբանությունն ունի հոգեկան վնասվածքի հետ աշխատելու բավականին արդյունավետ մեթոդներ, որոնք նպաստում են դրա անցանկալի հետևանքների հաղթահարմանը: Սակայն հարկ է նշել, որ վնասվածքածին իրադարձությունը՝ որպես անհատի կյանքի ընթացքում տեղ գտած առանձնահատուկ դեպք, ունի իմաստավորման, արժևորման կարիք: Այս առումով առաջնային կարևորություն են ստանում անհատի աշխարհայացքային դիրքորոշումները: Երևի թե հասկանալի է, որ հոգևոր փորձառությունը, հոգևոր կյանքին ներգրավվածությունը կարող են նպաստել վնասվածքածին իրադարձության նկատմամբ առավել ըմբռնող, ընդունող վերաբերմունքի ձևավորմանը: Այս դեպքում հոգեվնասվածքը կարող է նպաստել անձի հոգեբանական, ինչու չէ, նաև հոգևոր աճին, զարգացմանը, սեփական գոյության, կյանքի վերիմաստավորմանը:

— Պարո՛ն Պետրոսյան, իսկ ինչպե՞ս է հնարավոր տարբերակել հոգեբանական ճգնաժամը հոգևոր ճգնաժամից:

— Ճգնաժամ ասելով՝ ընդհանուր առմամբ հասկանում ենք այնպիսի իրավիճակ, երբ անհատի հարմարվողական կարողությունները չեն համապատասխանում փոփոխված պայմաններով առաջադրվող խնդիրներին: Չունենալով համապատասխան միջոցներ՝ մարդը չի կարողանում հարմարվել նոր պայմաններին, լուծել իր առջև ծառացող խնդիրները: Նման իրավիճակը կարող է հանգուցալուծվել կամ անհատի զարգացմամբ, նոր հարմարվողական կարողությունների ձևավորմամբ, կամ էլ անհատի կործանմամբ: Ընդ որում՝ հարկ է նշել, որ մարդու կենսագործունեության ընթացքում նրան առաջադրվող պայմանները կարող են ունենալ ինչպես արտաքին, մակերևութային, այնպես էլ ներհոգեկան, խորքային ծագում: Առաջին դեպքում, երբ անհատը չի կարողանում հարմարվել արտաքին հասարակական միջավայրի պայմաններին կամ լուծել սեփական հոգեկանի մակերևույթին (օրինակ՝ իմացական ոլորտում) առաջացող խնդիրները, կարելի է խոսել հոգեբանական ճգնաժամի մասին: Մյուս դեպքում, երբ փոխակերպվում են անհատի գոյության հիմքային շերտերը, երբ առաջ է գալիս Բացարձակի, անժամանակայինի հետ հարաբերվելու անհրաժեշտություն, իսկ անհատը դեռևս պատրաստ չէ դրան, խոսքը հոգևոր ճգնաժամի մասին է: Որպես վերջինիս բացասական ելք՝ կարելի է դիտարկել բարոյականության անկումը, արժեհամակարգի սնանկացումը: Հոգևոր ճգնաժամը հաճախ նույնացվում է այս երևույթներին, չնայած իրականում դրանք սոսկ այդպիսի ճգնաժամի բացասական հետևանքներն են: Դրական լուծման պարագայում անհատը կարող է վերաճել, վերածվել նոր էության, գտնել սեփական գոյության նոր հիմքեր:

Ներկայիս քաղաքակրթության ներկայացուցիչը հաճախ կանգնում է երկընտրանքի առջև. Կամ հարմարվել հասարակական միջավայրին և դառնալ արդյունավետ գործառող հասարակական էակ, կամ շրջվել դեպի սեփական խորքերը՝ աճելով ու ձեռք բերելով հոգևոր էություն:

— Պարո՛ն Պետրոսյան, հոգեբանությունն ինչպե՞ս է վերաբերվում մեղքի և խղճի գաղափարին՝ առանց կրոնական ենթատեքստի:

— Հոգեբանությունն առավելապես գործ ունի ոչ թե մեղքի, այլ մեղքի զգացման հետ: Կարող են լինել մարդիկ, որոնք, մեղք գործած չլինելով, կունենան մեղքի զգացում, և հակառակը: Հոգեբանության համար կարևորվում է հենց այդ զգացումը: Ինչ վերաբերում է խղճին, ապա հոգեբանական որոշ հայեցակարգերում այն ունի հանգուցային նշանակություն՝ որպես մարդու վարքը կարգավորող կարևոր գործոն: Ընդ որում՝ առանց մեղք գործելու՝ մեղքի զգացում կարող է առաջանալ խղճի ազդեցությամբ, երբ վերջինս չափազանց խիստ է ու չափազանց խիստ բարոյական պահանջներ է դնում մարդու առջև: Նման դեպքերում հոգեբանությունը փորձում է հավասարակշռել մարդու վարքը կարգավորող հոգեբանական «ատյանների» փոխհարաբերությունները:

— Տեր Մանուկ, արդյո՞ք անձը կարող է ազատվել մեղավորության զգացումից հոգեբանական մեթոդներով, թե՞ անհրաժեշտ է նաև մեղքերի թողություն:

— Միայն զղջմամբ և ապաշխարությամբ է հոգին ազատվում մեղքերից: Հոգեբանական ոչ մի մեթոդ չի կարող մարդու հոգին մաքրագործել:

— Պարո՛ն Պետրոսյան, կարո՞ղ է հավատքը բուժել այն հոգեկան ցավը կամ տառապանքը, որը հոգեբանությունը չի կարողանում վերծանել:

— Հավատը ոչ միայն կարող է բուժել, այլև կանխարգելել հոգեկան ցավն ու տառապանքը: Բանն այն է, որ ժամանակակից հոգեբանությունը, որոշ բացառություններով, չի լքում մարդու անհատական գոյության շրջանակները և փորձում է լուծել նրա խնդիրներն անհատական հատույթում: Ի տարբերություն դրա՝ հավատի միջոցով մարդը ներգրավվում է համայն մարդկության, նույնիսկ տիեզերքի պատմությանը, հաղորդակից է լինում անժամանակային, մշտնջենական Բացարձակին, ինչի զորությամբ նրա գոյության նեղ, ժամանակավոր շրջանակները կարծես քանդվում են, նա լքում է իր երկրային կեցության սահմանները՝ դուրս գալով ժամանակավոր, անցողիկ գոյության շրջանակներից: Հասկանալի է, որ այս տեսանկյունից ցավն ու տառապանքը ձեռք են բերում այլ իմաստ ու նշանակություն, անհատական խնդրից վերածվում են համամարդկային խնդրի, պատժից՝ փորձության, ինչի շնորհիվ դրանց բացասական ազդեցությունը կարող է մեղմանալ կամ նույնիսկ ընդհանրապես վերանալ:

— Տեր Մանուկ, երբ մարդը տագնապի զգացում է ունենում կամ խոր հիասթափություն է ապրում, ո՞րն է առաջին քայլը, որ պետք է անի հոգևոր տեսանկյունից:

— Երբ մարդը հեռանում է հավատքից, նրա հոգին զրկվում է Աստծո լույսից, խաղաղությունը վերածվում է դատարկության, և մարդու սիրտն այլևս չի զգում աստվածային ներկայության ջերմությունը: Միայն հավատքով է հոգին կենդանանում:

— Պարո՛ն Պետրոսյան, ո՞րն է տարբերությունը հոգեկան ներդաշնակության և հոգևոր խաղաղության միջև:

— Հոգեկան ներդաշնակությունը վերաբերում է մարդու ներհոգեկան բովանդակության գործառմանը, երբ դրանք հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն, չեն հակադրվում կամ բացառում միմյանց, փոխհամաձայնեցված ու փոխլրացնող են: Հոգևոր խաղաղությունը, հոգեբանության տեսանկյունից, կապված է սեփական գոյության նկատմամբ մարդու վերաբերմունքի, նրա կողմից սեփական կյանքի իրադարձությունների, կենսական իրավիճակների ընդունման ու իմաստավորման հետ: Հոգեկան ներդաշնակությունն ու հոգևոր խաղաղությունն ուղեկցում են միմյանց, ըստ էության՝ կազմում են մարդու հոգեկան, հոգևոր և հոգեբանական առողջության հիմքերը: Այդուհանդերձ՝ հոգևոր խաղաղությունն ավելի լայն է և կարող է դրսևորվել նույնիսկ այն դեպքում, երբ մարդու հոգում առկա է որոշակի հակադրություն՝ առճակատում: Կարևորն այն է, որ մարդն այդ հակադրությունն ընդունի որպես այդպիսին, որպես տրված մի բան, շնորհ, չմերժի այն, չվախենա ու չփախչի դրանից, այլ փորձի ներառել իր կենսահմաստային համակարգ: Սրա համար անհրաժեշտ է որոշակի կենսական իմաստություն, որը ձևավորվում է հոգևոր դաստիարակությամբ, հոգևոր աճի հետ:

— Տեր Մանուկ, ի՞նչ դեր ունի հավատը մարդու կյանքում: Կարո՞ղ է մարդն ապրել առանց հավատի, և ինչպե՞ս է դա անդրադառնում նրա հոգևոր վիճակի վրա:

— Եթե մարդը հավատք չունենա, չի կարող միայն իր ուժերով փրկվել, որովհետև մեղքը խանգարում է, որ լիովին մաքրվի: Միայն Աստծո շնորհն ու ողորմությունն են զորացնում մարդուն՝ հաղթահարելու իր անկումը և հասնելու փրկության:

— Պարո՛ն Պետրոսյան, ինչպե՞ս են մարդու հոգեկան հատկանիշները փոխվում, երբ նա սկսում է հավատալ, որ իր կյանքն ունի աստվածային նպատակ:

— Պատասխանը միանշանակ չէ, քանի որ որոշ դեպքերում նման հավատը կարող է բերել բացասական հետևանքների: Խոսքը մեծագարության մոլուցքի մասին է, երբ սեփական կյանքի աստվածային նպատակով օժտվածության հավատը կարող է անհատի մեջ ձևավորել գերակայության զգացում, երբ նա այդպիսի օժտվածությունը դիտարկում է ոչ թե որպես պարտավորություն, այլ որպես իրավունք: ➥ էջ 4

Կառավարման նախօրինակները և առաջնորդների վճռական դերը Սուրբ Գրքում

Աստվածաշունչը ներկայացնում է աշխարհի ձևավորման, հաստատման, շարունակական ընթացքի, ինչպես նաև ավարտի մասին ճշմարտությունը, որը պետք է ազդարարվի Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստով: Դեռ Սուրբ Գրքի առաջին՝ Ծննդոց գրքում պատմվում է նախամարդ Ադամի ստեղծման պատմությունը: Մինչ այդ Աստված կարգավորում է տիեզերքը, հաստատում երկինքն ու երկիրը, տարանջատում ջուրը ցամաքից, ձևավորում լուսատուները, ստեղծում բուսականությունն ու կենդանական աշխարհը: Այդ ամենի վերջում է միայն կյանք տրվում մարդուն, որ նա տնօրինի Տիրոջ՝ զարմանահրաշ կանոնակարգությամբ արարված աշխարհը: Այսպիսով՝ մարդը տերն է դառնում համայն արարչության:

Առաջին մարդիկ Եդեմի պարտեզում ունեին Աստծու օրհնաբեր ներկայությունն ու անմիջական ղեկավարությունը: Կառավարման ավելի արդար և կատարյալ ձև պատմության մեջ այլևս երբեք չի եղել: Այն միայն դրախտում էր, ուր կառավարիչն Աստված էր: Ի վերջո, սակայն, մարդը դուրս եկավ Տիրոջ հաստատած օրենքների շրջագծից, խախտեց Արարչի սահմանած կանոնակարգը, որի հետևանքով զրկվեց Աստծու հետ անմիջական հաղորդակցությունից ու առաջնորդությունից: Մարդկությունը քանակապես բազմանում էր, իսկ կառավարման պատասխանատվությունն արդեն կրում էր առանձնապես յուրաքանչյուր մարդ: Մարդիկ էին որոշում միմյանց ու շրջակայքի ճակատագիրը: Սպանե՞լ կենդանիներին որսի համար, թե՞ խնայել կենդանու կյանքը: Հատե՞լ բուսականությունն ու փայտաշեն պարագաներ պատրաստել. ինչո՞ւ ոչ: Ճիշտ այս տրամաբանությամբ մարդուն «տրվեց» անծայրածիր մի աշխարհ, որտեղ կարգուկանոն հաստատողն ինքը՝ մարդը պետք է դառնար:

Իհարկե, Աստվածաշնչում մարդկության զարգացման գործընթացը շատ արագորեն է ներկայացվում: Դժվար է Սուրբ Գրքում գտնել այնպիսի հարցերի ճշգրիտ պատասխաններ, ինչպիսիք են՝ ե՞րբ, ի՞նչ պայմաններում և ինչո՞ւ մարդկության մեջ ձևավորվեց տոհմացեղային կացութաձևով ապրելու նախօրինակը: Սուրբ Գիրքն իր «խոշորացույցը» կարևոր այլ գործընթացների և իրողությունների է բևեռում: Փոխարենը շեշտադրում է, որ մարդկային բոլոր ազգատոհմերը ձևավորվեցին մեկ մարդուց՝ Ադամից, իսկ ջրհեղեղից հետո արդեն՝ Նոյի սերունդներից: Աստվածաշունչն ընդգծում է բոլորի մեկ լինելու, մեկից ծնված լինելու, հետևաբար՝ արյունակիցներ լինելու գաղափարը:

Դարերի ու հազարամյակների ընթացքում, սակայն, մարդկությունը երբեք չհարմարվեց կառավարման այդօրյա ձևաչափին, մշտապես փորձեց հնարել կառավարելու և կառավարվելու ավելի արդյունավետ ձևեր, և դա շարունակվում է առայսօր: Այդօրինակ որոնումների պատմական վկայություններ են աշխարհակալ կայսրությունները՝ իրենց սկզբնավորմամբ, զարգացման ընթացքով և վախճանով:

Վերադառնալով սուրբգրային մարդկանց՝ հետաքրքրական է, որ առաջին անգամ հստակ ձևավորված տոհմացեղային համակարգ ներկայացվում է Հակոբի տան պատմության մեջ: Հակոբը և նրա 12 որդիները հետագայում դարձան Իսրայելի թագավորության 12 մեծ ցեղերը, ասել է թե՝ կազմեցին պետության 12 նահանգները: Նախահայր Հակոբը գլուխն էր իր ընտանիքի, կառավարում էր այն, հրահանգներ տալիս իր որդիներին, որոնք էլ հնազանդությամբ կատարում էին իրենց նախահոր կամքը: Հետագայում արդեն, երբ Քանանի երկրում, որտեղ հաստատված էր Հակոբի տունը, մեծ սով եղավ, հանգամանքների բերումով Հակոբի ամբողջ տոհմը՝ որդիներով ու զարմերով, կանանցով ու դուստրերով, տեղափոխվեց Եգիպտոս, ուր պարենի առատությունը պիտի թույլ տար փրկվել սովահարությունից: Եգիպտոսում Հակոբի (մյուս անունը՝ Իսրայել) զավակներն ապրեցին 430 տարի: Նրանք բազմացան, ձեռք բերեցին որոշակի նյութական կարողություն, բայց, ամենակարևորը, գրեթե հինգ դար ապրելով փարավոնական իշխանության ներքո՝ ընտելացան թագավորական համակարգին և իրենց ենթագիտակցության մեջ պահեցին ազգային թագավոր ունենալու անհրաժեշտությունը:

Ելից գրքից բացահայտում ենք, թե ինչպես է Աստված Մովսես մարգարեի միջոցով հրեաներին դուրս բերում Եգիպտոսից և Սինայի անապատում 40 տարվա դեգերումների ենթարկելուց հետո հասցնում Ավետյաց երկիր: Նախքան խոստացված երկիրը նվաճելը՝ Աստված, կարծես, ակնարկում է, որ մի օր հրեաները պիտի թագավոր ընտրեն, ուստի պատվիրում է իր ժողովրդին՝ այդ ընտրությունը կատարել Իրեն հաճո սկզբունքներով. «Եթե մտնես այն երկիրը, որ Տերը՝ քո Աստվածը, տալու է քեզ, ժառանգես այն ու բնակվես նրա մեջ և ասես՝ «Մենք էլ իշխան ունենանք, մեր շուրջը գտնվող մյուս ազգերի նման», ապա իշխան կկարգես նրան, որին կընտրի Տերը՝ քո Աստվածը: Քո եղբայրներից քեզ իշխան կկարգես: Չհամարձակվես կարգել օտար մի մարդու, որ քո եղբայրը չէ» (Բ Օր. 17:14—15):

Անշուշտ, թագավորություն ունենալու հասարակական որևէ ձգտում վկայում է տվյալ ժողովրդի անկախության բարձր գիտակցության մասին, իսկ նման գիտակցության կարելի է հասնել միայն բարձր զարգացվածության պարագայում: Հրեաներն ապրել էին գիտության, արհեստի, մշակույթի, ռազմական արվեստի մեծ նվաճումներ արձանագրած, ինչպես նաև առասպելաբանական ծանրակշիռ գիտակցություն ունեցող եգիպտական հասարակության մեջ: Հրեաներին առաջնորդող վերնախավը հասկանում էր, որ թագավոր ունենալու բաղձալի նպատակը հասարակական տաժանելի աշխատանք ու անխոնջ նվիրում է պահանջում: Անապատում քարավանի հոսքով ընթացող հրեաները պետք է անապատից դուրս գային որպես օրհնապահ ու կարգապահ մի ժողովուրդ: Եվ պատահական չէ, որ նրանց առաջնորդի՝ Մովսեսի անունը՝ Մադիամի քուրմ Հոթորը, ունենալով կառավարման զգալի փորձ, կարևորագույն մի խորհուրդ տվեց Մովսեսին, որը հեղափոխական նշանակություն ունեցավ անապատի հրեաների՝ ամբոխից ժողովրդի վերածման բարդ ճանապարհին: Տեսնելով, թե ինչ դժվարության առջև է կանգնած Մովսեսը հրեաների համար դատավարություն անելու ընթացքում՝ Հոթորն ասաց. «Այդ ի՞նչ ես անում դու ժողովրդին: Ինչո՞ւ ես դու միայն նստած, իսկ ժողովուրդը առավոտից մինչև երեկո կանգնած է շուրջդ» (Ելք 18:14): Մովսեսը պատասխանեց իր աներոջը. «Որովհետև ժողովուրդը գալիս է ինձ մոտ Աստծուց իրավունք հայցելու համար: Երբ նրանց միջև վեճ է ծագում, գալիս են ինձ մոտ: Ես դատում եմ նրանցից յուրաքանչյուրին և հայտնում Աստծու հրամաններն ու օրենքները» (Ելք 18:15—16): Հոթորն ասաց Մովսեսին. «Սոսկալի տանջանքներով ես տանջվում դու և քեզ հետ եղող ամբողջ ժողովուրդը: Քեզ համար ծանր է այդ գործը, դա միայնակ անել չես կարող: Արդ, լսի՛ր ինձ, ես քեզ խորհուրդ պիտի տամ, և Աստված քեզ հետ կլինի....Դու ողջ ժողովրդի միջից ընտրի՛ր ուժեղ տղամարդկանց՝ աստվածապաշտ, արդարադատ, գոռոզությունն ատող մարդկանց ու ժողովրդի վրա սրանց հազարապետներ, հարյուրապետներ, հիսնապետներ ու տասնապետներ կարգի՛ր: Նրանք մշտապես թող դատեն ժողովրդին, կարևոր գործերը թող հանձնեն քեզ, իսկ փոքր դատաստանները թող անեն իրենք. դրանով կթեթևացնես քո գործերը, և նրանք կլինեն քո օգնականները» (Ելք 18:17—22):

Այսպես՝ Մովսեսը կատարեց կարևորագույն մի քայլ՝ հրեա ժողովրդի համար կարգեց դատավորներ, որոնք հետագայում դարձան այդ հասարակությանը կարգուկանոն թելադրողները, Աստծուց՝ Մովսեսին տրված Տասնաբանյա օրենքների կատարումը վերահսկողներն ու արդարադատություն իրականացնողները: Շատ ավելի ուշ՝ Մովսեսի, ապա նաև նրա հաջորդ՝ Նավեի որդի Հեսուի մահից հետո, հրեական մինչթագավորական շրջանում, դատավորնե՛րը պիտի ստանձնեին հրեա ժողովրդի կատարյալ կառավարումն ու նրանց ազգային կյանքի կազմակերպումը: Այդ մասին վկայում է Հին Կտակարանում՝ Հեսուի և Թագավորների Ա գրքերի միջև զետեղված անչափ կարևոր՝ Դատավորների գիրքը:

Դատավորների կառավարման շրջանը հրեաներին մեկ քայլով ևս մոտեցրեց թագավորություն ունենալու նպատակին: Դատավորները հրեաներին առաջնորդում էին պատերազմում, կազմակերպում էին ներհասարակական կյանքը, սակայն ժողովուրդն անընդհատ շեղվում էր իր ընթացքից, օրինազանցություններ թույլ տալիս և դրանով թուլացնում իր արժեքային հիմքերը: Դատավորների գիրքն ավարտվում է ուշագրավ մի նախադասությամբ, որը լիարժեքորեն բացահայտում է կառավարման այդ շրջանում հրեա հասարակության մեջ առկա վտանգավոր մի շարք երևույթներ. «Այն օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ անում էր այն, ինչ հաճելի էր իրեն» (Դատ. 21:25):

Այսպես՝ գիրքն ինքնին հուշում է, որ դատավորական համակարգը չէր կարողանում լիարժեքորեն կատարել այն բոլոր գործառույթները, որոնք կբացառեին ամենաթողությունն ու կամայականությունները հասարակական կյանքում: Պատահական չէ, որ որոշ ժամանակ անց հրեաները մեկտեղվեցին այդօրյա իրենց դատավոր Սամուել մարգարեի շուրջը և ասացին. «Մեզ վրա մի թագավո՛ր կարգիր, որ մեզ դատի, ինչպես բոլոր ազգերի մոտ է» (Ա Թագ. 8:6): Հրեաները պահանջեցին թագավոր կարգել՝ իրենց առաջնորդելու համար, իսկ Սամուել մարգարեն զգուշացրեց, թե ինչ է սպասում նրանց, երբ ունենան թագավոր, և վերջինս գործադրի իր ամբողջական լիազորությունները: Մարգարեի բոլոր խոսքերը լսելուց հետո հավաքված հրեաները երկրորդեցին իրենց՝ թագավոր ունենալու ցանկությունը: Տերը խոսեց Սամուել մարգարեի հետ, ուղարկեց նրան Իր ընտրյալի՝ Սավուղի մոտ՝ օծելու նրան Իսրայելի թագավոր: Մարգարեն կատարեց Տիրոջ պատվերը, և կարճ ժամանակ անց հրեաները թագավոր ունեցան, և նա Տիրոջ օծյալն էր:

Տասնամյակների ու հարյուրամյակների ընթացքում, սակայն, հրեաներն ընտրեցին և ունեցան բազում թագավորներ, որոնք ժողովրդին առաջնորդեցին անաստվածության, կռապաշտության, բարոյալքվածության ու պարտության ճանապարհներով: Իսրայելի որդիները կորցրին իրենց շնորհը, կամավորապես հրաժարվեցին Աստծու շավիղներով ընթանալուց, տրվեցին արատավոր բարքերին ու թագավորությունը քայքայեցին: Իսրայելի մեծ թագավորությունը նախ պառակտվեց՝ բաժանվելով երկու մասի՝ Հուդա և Իսրայել, ապա երկու թագավորություններն էլ գրավվեցին, ավերվեցին, իսկ ժողովուրդը գերեվարվեց, տարվեց Ասորեստան ու Բաբելոն: ➥ էջ 5

Հոգևորականի և հոգեբանի դերը մարդու կյանքում

➥ էջ 3

Այս դեպքում անհատն իր անձը վեր է դասում այդ նպատակից, դրսևորում է գոռոզամտություն, եսապաշտություն, սեփական անձի գերագնահատում: Հակառակ պարագայում, երբ մարդը գիտակցում է, որ իր կյանքով ծառայում է իր իսկ անհատական գոյությանը գերազանցող աստվածային նպատակին, երբ այդ ծառայությունը դիտարկվում է որպես պարտավորություն, նրա մեջ ձևավորվում են ընդհանրության զգացում, հանդուրժողականություն, այլասիրություն, անխռովություն, լավատեսություն և բավարարվածության զգացում:

— Տե՛ր Հայր, մարդը կարո՞ղ է ինքնուրույն գտնել իր հոգևոր ուղին՝ առանց հոգևոր առաջնորդի:

— Կարող է, բայց առանց հոգևոր առաջնորդի՝ հեշտությամբ կարող է շեղվել: Հոգևոր առաջնորդը լույս է՝ ցույց տալու ճշմարիտ ճանապարհը...

— Իսկ կարո՞ղ է, Տե՛ր Մանուկ, հավատքն օգտակար լինել մարդուն՝ առանց կրոնական ծեսերի մասնակցության:

— Մարդը կարող է հավատալ և ապրել՝ առանց հոգևոր ծեսերին մասնակցելու, սակայն ծեսերն օգնում են այդ հավատքը խորացնելուն, զորանալուն: Առանց ծեսի՝ հավատքը կենդանի կլինի, բայց միայնակ...

— Պարո՛ն Պետրոսյան, ո՞րն է ժամանակակից աշխարհում հոգեբանական ակնհայտ խնդիրը, որ ամենաշատն է վտանգում անձի հոգեկան առողջությունը:

— Մեր օրերի ամենալուրջ հոգեբանական խնդիրը, երևի թե, մարդու կողմից սեփական գոյությունն ամբողջապես ապրելու անկարողությունն է: Այս խնդիրը թերևս ակնհայտ չէ, ինչով էլ պայմանավորված է դրա լրջությունը: Բանն այն է, որ ժամանակակից մարդն իր գոյությունն իմաստավորում է առավելապես արտաքին իրականությունից: Պատկերացրեք մեկին, որը, նայելով հայելու մեջ, անվերապահորեն հավատում է, որ ինքն ընդամենը դրա արտացոլանքն է: Գուցե օրինակը փոքր-ինչ չափազանցված է, բայց պետք է խոստովանենք, որ մեզնից շատերն իրական կյանքում վարվում են հենց այսպես. իրենց էությունը ճանաչում են դրա արտացոլանքի միջոցով և նույնիսկ նույնականանում են վերջինիս հետ: Սեփական գոյության, սեփական ես-ի անմիջական ապրումը չի կարևորվում կամ անտեսվում է: Մարդն ինքն իրեն ընկալում է որպես որոշակի դերեր կատարող հասարակական, որոշակի կառուցվածք ունեցող մարմնական էակ՝ նույնականանալով դրանց հետ և մոռանալով, որ ունի նաև ներքին, հոգեկան կեցություն: Այս երևույթը սնանկացնում է մարդու գոյությունը, զգալիորեն նվազեցնում այն: Հետաքրքիր է, որ նման վիճակը մեր օրերում չի դիտարկվում որպես հոգեկան խանգարում: Եվ ավելին, բազմաթիվ հոգեկան խանգարումներ բնութագրվում են անձի ներհոգեկան այն բովանդակությունների արթնացումով, որոնք առօրեական կենսագործունեության ընթացքում չեն դրսևորվում, գտնվում են «արտացոլանքի» ստվերում: Հոգեպես առողջ անձ լինելու կարևորագույն պայմանն այն է, որ մարդը հավասարապես ընկալի և ընդունի իր էության բոլոր՝ հասարակական, կենսաբանական, հոգեկան և հոգևոր կողմերը, հանդես գա որպես միասնական և ամբողջական էակ:

— Տե՛ր Հայր, ո՞րն է ժամանակակից աշխարհի մեծագույն հոգևոր մարտահրավերը, և ի՞նչն է ամենաշատը վտանգում հոգեկան և հոգևոր առողջությունը:

— Ամենամեծ մարտահրավերը եսասիրությունն է: Հաճախ մարդն իր անձը դնում է Աստծուց վեր: Սրանից առաջանում է հոգու դատարկություն, անտարբերություն, անհանգստություն: Եթե մարդու մեջ երախտագիտության ոգի չլինի, կամ մերձավորի հանդեպ նա սեր չունենա, կկորցնի նաև իր ներքին խաղաղությունը: Ամենավտանգավոր հիվանդությունը երախտամոռությունն է...

— Շնորհակալություն հարցազրույցի համար...

Հարցազրույցը՝ Անի ՆԱԶԱՐՅԱՆԻ

Դավաճանության դեպքերն ու ընկալումները Սուրբ Գրքում և քաղաքակրթական տարբեր միջավայրերում

Սկիզբը՝ թիվ 20

Դավաճանության ընկալումը քաղաքակրթական տարբեր միջավայրերում

Տակավին վաղնջական ժամանակներից հայտնի են այնպիսի մարդկանց պատմություններ, որոնք վախից, անձնական շահից ելնելով կամ այս և այլ գործոնների համակցությամբ՝ որոշել են դավաճանել իրենց ընկերներին, իրենց երկրին կամ իրենց սկզբունքներին: Հին եգիպտական, խեթական, ասորեստանյան հնագույն արձանագրություններում հիշատակվում են իրենց երկիրը թշնամուն մատնած տեղացի լրտեսներ, թշնամու ուժը թերագնահատող պալատականներ, որոնք, թշնամի երկրի կամակատարը լինելով, պաշտոնի հավակնությունից կուրացած, գործել են դավադրության ամեն կանոնների և գաղտնի սկզբունքների համաձայն: Սակայն երկրի ներսում եթե մեկին հաջողվում էր տապալել բռնապետական իշխանությունը, ժողովուրդը նրան արժանացնում էր օվացիաների և հերոսացնում, ինչպես եղավՔ. ա. 509 թվականին՝ Հռոմեական հանրապետության հիմնադրման ժամանակ, երբ Լուցիոս Յունիոս Բրուտոսն ապստամբություն բարձրացրեց Հին Հռոմի վերջին արքա Տարկվինիոս Գոռոզի դեմ և տապալեց հին կարգերը:

Հին հույների համար դավաճանությունը համարվում էր ամենածանր հանցագործությունը: Ծանրագույն պատիժները հատկացված էին դավաճանների համար, իսկ անպատվաբեր մահապատժից հետո չէր թույլատրվում նրանց թաղել հանրային գերեզմանատանը: Աթենական օրենքների համաձայն՝ դավաճանները կամ մահապատժի էին ենթարկվում, կամ վտարվում պետության տարածքից: Հիշենք, թե ինչպես վարվեցին արկադացիները՝ դավաճանին և նրա ընտանիքին քարերով հարվածելով և դուրս վտարելով երկրի սահմաններից, երբ իմացան, որ իրենց գաղտնիքները հայտնել են սպարտացիներին: Իսկ հունական առասպելաբանության մեջ դավաճանության ամենահայտնի օրինակներն առնչվում են ամուսնական անհավատարմություններին, որոնք պատճառ են դառնում արյունահեղ կռիվների (Յասոն և Մեդեա, Ագամեմնոն և Կլիտեմնեստրա, Պարիս, Մենելաոս և Հեղինե....): Մասշտաբային կամ զանգվածային դավաճանության օրինակներից են սեփական ժողովրդի ուրացումը և մատնումը թշնամի ուժերին: Հայրենիքի դավաճանի վատահռչակ օրինակներից է սապատավոր Եփիալտեսը, որը դավաճանեց իր հայրենիքին՝ հույս ունենալով պարսիկներից ստանալ որոշակի պարգև՝ ցույց տալով Քսերքսեսի բանակին Թերմոպիլե լեռնանցքում հունական դիրքերը, ինչն օգնեց նրանց հաղթելՔ. ա. 480 թ. Թերմոպիլեի ճակատամարտում: Եփիալտեսի դավաճանությունից հետո նրա անունը մնայուն խարան ստացավ. այն նշանակում էր «մղձավանջ» և հունական մշակույթում խորհրդանշում էր արքետիպային դավաճանին, ինչպես Հուդան՝ քրիստոնեական մշակույթում, Վասակը՝ հայոց լեզվամտածողության մեջ, և Բենեդիկտ Առնոլդը՝ ամերիկյան պատմական հիշողության մեջ:

Հրեական թագավորության տարիներին (Ք. ա. 10–6-րդ դդ.) դավաճանություն էր համարվում ամեն խռովություն կամ ապստամբություն՝ ուղղված թագավորական իշխանության դեմ: Հրեական մտածողության մեջ Աստծո օծյալ թագավորի խոսքերին և գործերին հակադարձողը կամ դարանակալ ենթադավողը համարվում էր մահվան ենթակա. թագավորին դավաճանողը համարվում էր թշնամի և ենթակա էր անողոք մահվան: Ինչպես փաստում է ռաբբիական գրականությունը, հին հրեա թագավորները կարող էին մահապատժի ենթարկել ապստամբության մեղավորներին՝ նրանց արարքը դիտարկելով դավաճանություն: Նույնիսկ եթե թագավորը հրամայեր իր հպատակներից մեկին գնալ որոշակի տեղ կամ արգելեր նրան լքել իր տունը, նա պետք է հնազանդվեր, ապա թե ոչ՝ մահապատժի կարժանանար: Նա, ով չէր ենթարկվում թագավորական հրամաններին, համարվում էր դավաճան: Դավաճանության մեղադրանքով մահն իրականացվում էր սրով: Թագավորը կարող էր պատժել հանցագործին նաև այլ կերպ, բայց նա չէր կարող բռնագրավել նրա ունեցվածքը, քանի որ դա կլիներ կողոպուտ: Հրեական այս սովորույթների մասին է խոսում 12-րդ դարի ռաբբի Մայմոնիդեսը ռաբինական կրոնական օրենսգրքում՝ Միշնե Թորայում (հայերեն՝ «Թորայի կրկնություն»):

Միջնադարյան ընկալումներում դավաճանության երևույթի ընդգրկումն պատկերը մեր առջև բացվում է, երբ ընթերցում ենք 14-րդ դարի իտալացի բանաստեղծ Դանթե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմը: Դժոխքի ինը պարունակներից վերջինում սառած մեծ լճի մեջ են ներկայացվում դավաճանները՝ իրարից, ըստ դավաճանության տեսակի, տարբեր տարածությունների վրա: Այս հոգիների դավաճանական արարքները սիրո (որն Աստված է) և մարդկային ողջ ջերմության ժխտումն են: Իրենց կենդանության ժամանակ, մերժելով Աստծո սերը և անտեսելով Բարձրյալի ողորմությունը, այժմ նրանք չհալչող սառցե աշխարհում են հայտնվել, որը նրանց ներաշխարհի էության արտահայտությունն է: Դժոխքի այս վերջին՝ ամենախոր մակարդակը վերապահված է դավաճաններին, ուրացողներին և երդմնազանցներին (այստեղ ամենահայտնի բանտարկյալը Հուդա Իսկարիովտացին է): Այս պարունակի առաջին հատվածում հավաքվածները դավաճանել են իրենց հարազատներին, ինչպես Կայենը դավեց իր եղբայր Աբելին (Ծննդ. 4:8): Երկրորդ հատվածը կոչվում է տրոյացի զինվոր Անտենորի անունով, որը քաղաքը հանձնել էր հույներին: Այստեղ գտնվում են իրենց երկրի դավաճանները: Դանթեն պատահաբար հարվածում է Ֆլորենցիայի դավաճան Գուելֆի գլխին և այնուհետև սկսում է ավելի դաժանորեն վարվել նրա հետ, քան գործել էր մինչ այդ հանդիպածների նկատմամբ: Երրորդ շրջանում իրենց հյուրերին դավաճանածներն են, ինչպես Պտղոմեոսը, որն իր աներոջը՝ Սիմոն Մակաբայեցուն, և նրա որդիներին հրավիրել էր խնջույքի, այնուհետև սպանել նրանց (Ա Մակ. 16-րդ գլ.): Չորրորդ բաժինը, որը կոչվում է Հուդա Իսկարիովտացու անունով, պարունակում է իրենց տերերին և բարերարներին դավաճանածներին: Այս շրջան մտնելուց հետո Վիրգիլիոսն ասում է. «Vexilla regis prodeunt inferni» («Դժոխքի թագավորի դրոշները մոտենում են»):

Ջոտտո դի Բոնդոնե. «Հուդայի համբույր», 1304—1306 թթ.

Քրիստոնյա Հայաստանի միջնադարյան կրոնա-փիլիսոփայական մտքում, կանոնական գրականության մեջ նույնպես դավաճանությունը դիտվում է նախևառաջ որպես հակաստվածային երևույթ: Անկախ դավաճանության տեսակից՝ այն աստվածային օրենքի խախտում է և արժանի է եկեղեցական խստագույն պատժի: «Կանոնագիրք Հայոց»-ում հստակ սահմանվում են պատիժների կերպն ու դրանց գործադրման ժամանակահատվածը: Երդմնազանց եղողը 10 տարով զրկվում էր հաղորդությունից, մինչև չարտասվեր ու չզղջար իր հանցանքի համար (Բար. Լ), իսկ Քրիստոսին ուրացողն իր ամբողջ կյանքը պետք է անցկացներ ապաշխարությամբ, պահեցողությամբ և աղոթքով (ԹԴԱ. ԻԸ), և միայն վարդապետի իշխանությամբ է, որ նրա ընթացքը վերանայվում է (Բար. Բ. ճԾԸ): Երբեմն մարողին, ուրացողին արգելվում էր եկեղեցի մտնել, իսկ եթե մեկը հանդգներ, համարվում էր Քրիստոսի խաչողներին հավասար (Բար. Բ. ճՀԹ): Կան ավելի խիստ կանոններ, որոնք աններելի և անփոխհատուցելի են համարում դավաճանությունը: Բարսեղի ԼԶ կանոնում նշվում է, որ չկա իրավական սահմանում՝ դավաճանին փրկության արժանացնելու. նա արժանի է սրի և գերության, իսկ նրա դատաստանը յոթնապատիկ առավել կլինի, քան սպանողներինը:

Հետաքրքրական է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ մեղքերի խոստովանության ընդհանրական աղոթքում («Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն») չի հիշատակվում դավաճանությունը: Սակայն երբ փորձում ենք ներկայացվող մեղքերի պատճառագիտության մեջ խորանալ, պարզ է դառնում, որ յուրաքանչյուր մեղքի հիմքում դավաճանական մղումն է՝ ընդդեմ Աստծո և մարդկային բարեկենցաղ հարաբերությունների:

Հայրենիքի դավաճանությունը, միջնադարյան իրավակարգի համաձայն, առավելապես ենթարկվել է մահապատժի, հաճախ՝ կախաղանի, իսկ զինվորականների դեպքում՝ գնդակահարության: Անգլիայում պետական դավաճանության (լատ.՝ perduellio) համար սահմանված էր պատիժների մի շղթա՝ տանջամահ անելով կախել, փորը թափել և քառատել (Hanged, drawn and quartered): Ինչպես հնագույն ժողովուրդների կանոնական մտածողության մեջ էր ամրագրված, այնպես էլ Թյուդորների ժամանակներից Անգլիայում թագավորական օրենքների և հրամանների ոտնահարումն ու խախտումը դավաճանություն էին դիտարկվում: Պետական դավաճանությունը դիտարկվել է որպես հանրագիտարանային հիմնական սահմանում, ինքնիշխան պետության կամ նրա ղեկավարի դեմ հարձակվելու հանցագործությունը բնութագրող ընդհանուր հասկացություն (Encyclopedia Britannica, 1911):

Դավաճանության հանդեպ խիստ վերաբերմունքը և պատժելիությունը նպաստում էին դրա հանդեպ միանշանակ բացասական գնահատականի ձևավորմանը և այն ընդօրինակելուց խուսափելուն:

Դավաճանությունը, սակայն, շատ արարքների նման ընդօրինակելի է՝ չնայած դրա դեմ հնչած խիստ բացասական քննադատություններին: 17-րդ դարի անգլիացի նշանավոր փիլիսոփա Թոմաս Հոբսն իր «Լևիաթան, կամ Եկեղեցական և քաղաքացիական պետության նյութը, ձևաչափը և իշխանությունը» (անգլ.՝ Leviathan or The Matter, Forme and Power of a Common Wealth Ecclesiasticall and Civil) տրակտատում անդրադառնում է դավաճանության հանդեպ մարդկային հակմանը: Թոմաս Հոբսի մտածողությունը հիմնված է մատերիալիզմի փիլիսոփայության վրա, քանի որ նա պնդում է, որ մարդկային բոլոր մտքերն ինչ-որ կերպ առաջին հերթին ընկալվում են զգայարաններով, ինչը նշանակում է, որ զգայարանները նախ պետք է շփվեն առարկայի հետ, նախքան այդ առարկան կդառնա մարդու երևակայության մաս: Հոբսի սեփական անկողմնակալ մտքերն արտացոլում են իր ժամանակի քաղաքական խռովությունները: Քաղաքացիական պատերազմի մասին նրա հիշատակումը վերաբերում է Անգլիայում քաղաքացիական պատերազմին, որի ընթացքում թագավոր Չառլզ I-ը գերի է ընկել և մահապատժի ենթարկվել խորհրդարանականների կողմից: Հոբսը ենթադրում է, որ նրանք, ովքեր գերել են Չառլզ I-ին, դա արել են 30 արծաթի դիմաց, ինչը Հուդան ստացավ Հիսուսին դավաճանելու համար, բայց նա նաև առաջարկում է, որ ամբողջ միտքը, անկախ նրանից, թե որքան պատահական է, կապված է և հիմնված է փորձի վրա:

Այսպիսով՝ դավաճանությունը մարդկային, հասարակական, հոգևոր մեծագույն աղետ է, որը վնասում է առողջ հարաբերությունները, փոթորկում ազգերի խաղաղ և բարգավաճ ընթացքը և պատճառ դառնում աստվածային պատժի ու դատապարտման: Երբ խախտվում են հոգևոր-արժեքային, հոգեբանական սահմանները, կուրամիտ որոշումներով, ենթգիտակ նկրտումներով և օտարամոլ գաղափարաբանությամբ ապակայունացնում ազգային բարոյական դիմագիծը, պարարտ հող է ստեղծվում դավաճանության համար, և մարդիկ դառնում են դավաճանության զոհեր և հակամարտում աստվածային Բանի անվախճան ճշմարտության դեմ:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կառավարման նախօրինակները....

էջ 4

Այսպես՝ թագավորները, որ հրեաներին իրականում պետք է առաջնորդեին արդարության և ճշմարտության ճանապարհով, ժողովրդին տարան դժոխքի ու կործանման ուղիներով: Տանջված ու հալածված բարեպաշտ հրեաները հայցում էին Աստծու ողորմությունը՝ խնդրելով իրենց համար մի նոր թագավոր, որը կվերացնի իրենց երեսից անարգանքն ու ամոթը, կվերահաստատի նախկին փառքն ու զորությունը: Իսկ Աստված մարգարեների միջոցով խոստանում էր միայնակ չթողնել Իր սայթաքած ժողովրդին՝ որպես գոտեպնդում ասելով, որ մի նոր Օծյալ պետք է ուղարկի նրանց համար, որը և վերջապես պետք է ուղղորդի Իր ժողովրդին աստվածային ճանապարհներով: Ահա այս խոսքերով է Եսայի մարգարեն նախանշում հրեաների՝ Տիրոջից ուղարկված փրկությունը. «Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, մեծ լույս տեսավ. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում և մահվան ստվերների մեջ, լույս պիտի ծագի...» (Ես. 9:1), «...քանզի մեզ համար Մանուկ ծնվեց, մի Որդի տրվեց մեզ, որի իշխանությունն Իր ուսերի վրա է. Նա Մեծ խորհրդի պատգամաբեր պիտի կոչվի, Սքանչելի խորհրդական, Աստված հզոր, Իշխան, Հայր հավիտենական: Ես խաղաղություն կբերեմ Նրա իշխաններին, իսկ Իրեն՝ առողջություն: Մեծ է Նրա իշխանությունը, և Նրա խաղաղությունը սահման չունի: Նա պիտի նստի Դավթի աթոռին, Նրա թագավորությունը պիտի զորանա և հաջողվի իրավունքով ու արդարությամբ այսուհետև և հավիտյանս հավիտենից: Զորությունների Տիրոջ նախանձախնդրությունը պիտի կատարի այդ» (Ես. 9:5–6):

Տիրոջից առաքվող փրկության բոլոր խոստումներն աշխարհի Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին էին: Աստված ոչ միայն հրեաների, այլև տառապյալ համայն մարդկության համար կատարեց Իր խոստումը, որ մարդկությունն այլևս Իր առաջնորդությունը բոլորանվեր կերպով չվստահի իրենից ընտրված որևէ կայսեր, թագավորի, դատավորի կամ կառավարչի, որ մարդկությունն այլևս չսայթաքի՝ հետևելով մեղավորներին, այլ միայն ու միայն ապրի Փրկչի նախանշած ճշմարիտ ճանապարհով, և որպեսզի, ինչպես գրում է Պողոս առաքյալը, «Հիսուս Քրիստոսի անվանն ամեն ծունկ խոնարհվի՝ թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետականների, և ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է՝ ի փառս Հայր Աստծու» (Փիլ. 2:10):

Արման սրկ. ԲՈՒՆԱՐՋՅԱՆ
Արմինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ի՞նչ է կարգալուծությունը

Ինչ է տեղի ունենում կարգալուծության դեպքում

Եկեք պարզենք, թե ինչ է տեղի ունենում կարգալուծության դեպքում՝ համաձայն Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու դիրքորոշման, մանավանդ որ վերջերս որոշ կարգալույծներ պնդում են, թե կարգալուծությունից հետո իրենց քահանայական օծումը մնում է, որով իբրև թե իրենք չեն դադարում քահանա լինելուց: Այդպիսով նրանք նաև մոլորեցնում են իրենց հետևորդներին, որոնք հավատալով՝ շարունակում են մասնակցել նրանց չպատարագներին, ստանալ չհաղորդություն, նրանց ձեռամբ չմկրտվել, չպսակվել և այլն:

Նախ անհրաժեշտ է դիտարկել այս հարցը «Կանոնագիրք Հայոց»-ի տեսանկյունից, որը ներառում է առաքելական կանոններից սկսած՝ մինչև միջնադարյան Հայ և Ընդհանրական Եկեղեցու հայրերի հաստատած կանոնները: Կարգալույծ անելիս տարբեր կանոններ հրամայում, հրահանգում են լուծարել եպիսկոպոսի, քահանայի, սարկավագի կարգը, այսինքն՝ օծյալ հոգևորականի քահանայությունը, ինչպես նաև օծումը:

Հստակեցնելու համար, որ լուծարումը վերաբերում է քահանայությանն ամբողջապես, տարբեր կանոններ ասում են, որ լուծարվում է քահանայությունը. «.... քահանայութիւնն լուծցի կամ յերիցութենէն լուծցի» (Սահմանք եւ կանոնք կարգի Աստուծոյ սրբոյ եկեղեցւոյ, զոր եդին վարդապետք Հայոց ի լրութիւն Առաքելական եւ Նիկիական կանոնաց հաստատութիւն, կանոններ ՇՀԶ (ՇՀԲ) Բ, ՇՂԳ (ՇԶԹ) ԺԹ, ՇԶԳ (ՇՀԹ) Թ), կամ լուծարվում է քահանայությունից. «....լուծեալ ի քահանայութենէ» (Կանոնք երկրորդ առաքելականք, կանոն ԽԵ (ԽԴ) ԺԱ):

«Կանոնագիրք Հայոց»-ը ցույց է տալիս, որ լուծարումը վերաբերում է ոչ միայն քահանայությանը, այլև օծմանը. «....լուծցի յօծմանէն եւ եղիցի նզովեալ» (Բասղի գիր կանոնական, կանոն ՌՀԱ (ՌԿԳ) ՃԼԸ), ինչպես նաև քահանայական շնորհին, ձևին և նշանին. «.... այնպիսին ամենևին բարձցի ի քահանայական շնորհէն, եւ ձեւն եւ նշանն» (Սահմանք կանոնաց Սուրբ Առաքելոյն Թադէոսի, կանոն ՉԽ (ՉԼԴ) ԺԱ):

Եկեղեցական կանոնները պատվիրում են նաև լուծարումից հետո, ըստ նախատեսության, նզովել, Եկեղեցու բաժնից հեռացնել կամ համարել ամբարիշտ. «....համարեալ եղիցի, որպէս զամպարիշտն» (Սահմանք եւ կանոնք կարգի Աստուծոյ սրբոյ եկեղեցւոյ, զոր եդին վարդապետք Հայոց ի լրութիւն Առաքելական եւ Նիկիական կանոնաց հաստատութիւն, կանոն ՇԶԸ (ՇԶԴ) ԺԴ): Հայ Առաքելական Եկեղեցում եկեղեցական կարգից հեռացվածներին նզովել են ծանրագույն հանցագործությունների դեպքում, մնացած հանգամանքներում դասել են աշխարհականների շարքը, չնայած որ կանոնը թույլ է տալիս նաև, ըստ հանգամանքի ծանրության, տվյալ անձին ամբարիշտներին հավասար համարել:

Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումը

Քահանայական ձեռնադրության անջնջելիությունը Կաթոլիկ Եկեղեցու ուսմունք է, որը հաստատվել է Տրիդենտյան ժողովում և գործադրումն է այդ ժողովի որոշումների: Սույն ժողովը Կաթոլիկ Եկեղեցու 19-րդ «տիեզերական» ժողովն է՝ գումարված 1545—1563 թթ.: Այսինքն՝ նշյալ ժողովի որոշումները տարածվում են ժողովը գումարած Կաթոլիկ Եկեղեցու և միջնադարյան այդ ժողովի որոշումներն ընդունողների վրա: Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է միայն տիեզերական երեք ժողով: Կաթոլիկ Եկեղեցին իր բոլոր կարևոր ժողովները տիեզերական է հռչակել, որոնք, ըստ էության, միայն մեկ Եկեղեցու ներեկեղեցական հավաքներ են, և որոնց տիեզերական լինելը չեն ընդունում մյուս Եկեղեցիները: Այսպիսով՝ քահանայական ձեռնադրության անջնջելիության ուսմունքը կաթոլիկների «տիեզերական» ժողովի ուսմունքն է, ըստ որի՝ վավերականորեն ստացված ձեռնադրությունն անվավեր չի դառնում, սակայն հոգևորականը կարող է կորցնել հոգևոր կարգը՝ զրկվելով իր բոլոր պաշտոններից և իրեն լիազորված ողջ իշխանությունից:

Ստացվում է, որ կաթոլիկ քահանան կարող է բաժանվել եկեղեցական իշխանությունից, արգելված լինել, կարող է բոլորովին հեռանալ քրիստոնեությունից՝ պահպանելով առաքելական ձեռնադրությունը: Փաստորեն՝ ձեռնադրյալն իր հերթին կլինի շնորհն ինքնուրույն կրող աղբյուր, որից կարող է օգտվել ըստ իր հայեցողության՝ բոլորովին հաշվի չնստելով իրեն ձեռնադրողների ոչ ուսմունքի, ոչ ցանկությունների հետ:

Սակայն հստակ է, որ կաթոլիկները, քահանայության կամ մկրտության անջնջելիության ուսմունք ստեղծելով, նպատակ չեն ունեցել քահանայության կարգից զրկվածների կամ ուրացյալ մկրտյալների շահերը պաշտպանել և նրանց «բացառիկ անձեր» հաստատել (կաթոլիկներն էլ են այդպիսիներին դատապարտելի համարում), այլ միմիայն ցանկացել են աստվածային շնորհի անեղծանելի բնույթը շեշտել, անգամ եթե այն ստացած անձը պղծում է իր ընթացքը:

Ուղղափառ Եկեղեցու դիրքորոշումը

Կարգից զրկված հոգևորականի կատարած «ծեսը» չունի ոչ իրավական և ոչ էլ հոգևոր որևէ նշանակություն՝ այսպես կոչված քահանայության խորհրդի անջնջելիության հիմնավորմամբ: Իսկ անջնջելի, ըստ Ուղղափառ Եկեղեցու վարդապետության, միայն նշանակում է, որ այդ խորհուրդը չի կարող միևնույն կերպով կրկնվել նույն անձի վրա: Սա նշանակում է, որ կրկնամկրտություն կամ կրկնաձեռնադրություն չի կատարվում, քանզի հակառակ դեպքում աստվածաբանական ընկալումով ընդունելի կլիներ, որ անձի անարժանության, պղծության, նրան կարգից հեռացման պարագայում եղծվում է նաև նրան տրված աստվածային շնորհը, և այն պետք է կրկնել՝ շնորհը շտկելու կամ սրբելու համար: Այդ պատճառով էլ ոչ թե քահանայության կամ մկրտության անջնջելիությունն է հաստատագրվում, այլ դրանց անդրադառնալով՝ շեշտվում է աստվածային շնորհի անեղծանելիությունը:

Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու դիրքորոշումը

«Կանոնագիրք Հայոց»-ի կանոնները հաստատում են, որ կարգալույծ արվածը բոլորովին զրկվում է քահանայական շնորհից, ձևից և նշանից. «....այնպիսին ամենևին բարձցի ի քահանայական շնորհէն, եւ ձեւն եւ նշանն» (Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի, կանոն ՉԽ (ՉԼԴ) ԺԱ): Կանոնագրքում գործածված սահմանումներով՝ քահանայական կարգից, շնորհից, օծումից, ձևից և նշանից զրկումը կատարվում է ոչ միայն ծանր հանցագործությունների դեպքում, այլև եկեղեցական կարգավորության անհնազանդության, եկեղեցական պատշաճության խաթարման համար:

Իսկ ինչպե՞ս հասկանալ «շնորհի» և «օծման» լուծարումը: Երբ կանոնն ասում է, որ օծումը լուծարվում է, նշանակում է, որ օծումը կամ դրա հետ կապված շնորհը դադարում է գործել՝ վերցվելով անհնազանդ հոգևորականից, քանի դեռ նա պառակտման և անհնազանդության մեջ է, քանի որ շնորհի գործելու գլխավոր պայմանները հնազանդությունն ու խոնարհությունն են: Քահանան, որ խախտել է Եկեղեցու միասնությունը, կտրվում է Խորհուրդների շնորհների աղբյուրից՝ Աստծուց, որը գործում է միայն Եկեղեցու Մարմնի միջոցով: Երբ կանոնն ասում է, որ ձևն ու նշանն են վերցվում, դա նշանակում է, որ քահանայի արտաքին նշանները (հոգևոր զգեստը, անունը) և նրա կատարած ծեսի ձևը (բանաձևը) չունեն բովանդակային իշխանություն: Այս դեպքում «լուծարումը» հոմանիշ է անվավերության, քանի որ քահանայի կատարած խորհրդի միջոցով չի փոխանցվում Սուրբ Հոգու շնորհը, որովհետև կարգալույծ քահանան Եկեղեցուց դուրս է գործում և ինքնաբերաբար՝ Աստծո կամքից դուրս:

Այսպիսով՝ կարգալուծության դեպքում, Հայ Առաքելական Եկեղեցու տեսանկյունից, տեղի է ունենում ավելին, քան պարզապես իրավական սահմանափակումն է: Կարգալույծի կողմից ոչ մի եկեղեցական խորհուրդ չի իրագործվում:

Քահանայական դրոշմը՝ որպես հնարավորություն, տեխնիկապես մնում է, և դա է պատճառը, որ ապաշխարող քահանային կրկնաձեռնադրություն չի արվում:

Հովհաննես Արճիշեցին ընդգծում է. «Քահանայական շնորհը մշտամնա է, եթե հոգևորականն իր կարգի մեջ է: Իսկ եթե կարգի մեջ չէ, չի կարող պատարագ մատուցել, չի կարող օգտվել քահանայագործության, խորհուրդների կատարման իրավունքներից և ոչ էլ շնորհաբաշխության իրավունքն ունի: Կարգից լուծարումը վերաբերում է նաև օծումից լուծարելուն»:

Վերջապես, «Կանոնագիրք Հայոց»-ը խստագույնս է անդրադառնում այն հոգևորականներին, որոնք կարգալուծությունից հետո կհամարձակվեն մոտենալ երբեմն իրենց վստահված ծառայողական պաշտոնին: Մասնավորապես, կանոնը հրամայում է. եթե կարգալույծ արվելուց հետո քահանան համարձակվի շարունակել գործել որպես քահանա, ապա նա ամբողջովին թող արտաքսվի Եկեղեցուց. «....եւ համարձակեսցի մերձենալ յաւանդեալսն երբեմն նմա պաշտաւն, սա ամենևին ի բաց հատեալ անկցի յեկեղեցւոյ» (Կանոնք Առաքելական ի ձեռն Կղեմայ, գլուխք ՁԵ, կանոն ԻԶ), իսկ նրանից մկրտվածներին ու պսակվածներին պարտադիր է նորից մկրտել և նորից պսակել. «Քահանայ որ լուծեալ է ի կարգէն վասն չար գործոց՝ զմկրտեալն եւ զպսակեալն ի նմանէ պարտ է այլ նորոգել» (Կանոնք Բասղի պէսպէս ախտից, գլուխք ՄՀԲ, կանոն ԻԸ): Իսկ եթե որևէ քահանա արհամարհի իր եպիսկոպոսի հրամանը, երբ եպիսկոպոսը նրան մերժի և հեռացնի Եկեղեցուց, և նա մարդկանց առանձին հավաքի ու սուրբ սեղան հաստատի, այդպիսիին պետք է ամբողջությամբ մերժել և այլևս մխիթարության խոսք չասել, քանզի այլևս չի կարող կրկին նույն պատիվն ընդունել: Իսկ եթե համառի ու խռովություններ հարուցի, Եկեղեցու վրա արտաքին իշխանությամբ կամ այլ ուժի օգնությամբ ամբոխ բերի, այդպիսիին՝ իբրև խռովարարի, պետք է հնազանդեցնել ու սանձերը քաշել. «....զայնպիսիսն բնաւին մերժել արժան է եւ ոչ եւս մխիթարութեան ինչ հասուցանել իբրև ոչ եւս կարող են զնոյն պատիւ ընդունել ամենևին: Ապա եթէ յամեսցեն եւս ի նմին իրս խռովութիւնս առնել եւ ամբոխս յարուցանել յեկեղեցւոյ վերայ յարտաքին իշխանութենէ եւ ի զաւրութենէ ուստեք, զայնպիսիսն իբրև զխռովարարս դարձուցանել եւ սանձաբեկ առնել արժան է» (Կանոնք Անտիոքայ, ԱՆՏ, կանոն Ե):

Եզրակացություն

Կարգալույծ քահանայի պնդումը, թե իր օծումը մնում է և հիմք է հետագա քահանայագործման, կեղծ ու անհիմն է: Կարգալուծությունը լուծարում է քահանայական շնորհի գործունեությունը և ուժը՝ կտրելով այն Եկեղեցու կենարար միասնությունից: Քահանայական կարգը, շնորհը, օծումը, նշանը և ձևը փոխկապակցված են: Զրկվելով կարգից՝ քահանան զրկվում է և դրանցից: Նրա ձեռամբ ոչ մի «խորհուրդ» վավեր չէ թե՛ իրավական և թե՛ հոգևոր տեսանկյունից: Օծումը քահանայի սեփականությունը չէ, որ իր կամքով պահի, այն տվողն է վերցնում և դարձյալ վերադարձնում: Այսպիսով՝ «լուծարում» բառը նկարագրում է շնորհի գործադրման լիակատար դադարեցում, որը ոչ միայն կանոնական պատիժ է, այլև հոգևոր հետևանք:

Սամվել դպիր ԳՐԻԳՈՐՅԱՆ
Շնորհք աբղ. ՊԱԼՈՅԱՆ

Հանգիստը որպես հոգևոր կյանքի անբաժան մաս

Աշխատանքն այն կոչումն ու առաքելությունն է, որ Աստծուց տրված է մարդուն դեռևս դրախտից: Ադամի մասին Ծննդոց գրքում կարդում ենք. «Տեր Աստված Իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն» (Ծննդ. 2:15): Աստվածաշունչը հստակորեն ցույց է տալիս, որ իդեալական կյանքն ամենևին բացարձակ անգործություն չի ենթադրում, դրախտային վայելքը պարունակում է ստեղծարարություն և արդյունավորում: Ի վերջո, Աստված ևս, Իր անսահման սիրուց *արարեց* աշխարհը: Աստված մշտապես գործել է և շարունակում է *գործել*. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ուրեմն ես ևս գործում եմ» (Հովհ. 5:17): Արարչությունը, փրկագործությունը, Սուրբ Հոգու ներգործությունը և Հայտնության գրքում նկարագրվող գալիք իրադարձությունները վկայում են, որ Աստծո էության անբաժան մասն է գործելը: Աշխատանքի բարի բնույթի և ծուլության մեղսավորության մասին անդադար խոսում են Սուրբ Գիրքն ու Եկեղեցու վարդապետությունը: Բավական է նշել միայն, որ յոթ մահացու մեղքերից մեկը հենց ծուլությունն է:

Սակայն ինչպես ցանկացած բարի բան, նույնպես և աշխատանքը, կարող է մարդու հոգևոր կյանքում ունենալ բացասական ազդեցություն, եթե խախտվի կյանքում դրա ներդաշնակ տեղաբաժանումը: Աշխատանքը մարդու կյանքում որքան էլ որ ունի առանցքային նշանակություն, այնուամենայնիվ, քրիստոնեական ընկալման մեջ ոչ պակաս կարևոր է նաև աշխատանքից հանգիստը:

Արարչագործության պատմության մեջ կարդում ենք. «Աստված վեցերորդ օրն ավարտեց արարչագործությունը եւ Իր կատարած բոլոր գործերից հետո՝ յոթերորդ օրը, հանգստացավ» (Ծննդ. 2:2): Այս արտահայտությունը քննարկվել է բազմաթիվ աստվածաբանների ու Սուրբ Գրքի մեկնիչների կողմից, սակայն այն նախևառաջ օրինակ է՝ տրված մարդկությանը: Հիսուս Քրիստոսի մասին ևս Ավետարաններում բազմիցս հիշատակվում է, որ հանգստանում էր (Մարկ. 6:31, Մաթտ. 8:24 և այլն): 10 պատվիրաններից չորրորդը պատգամ է՝ շաբաթ օրը սուրբ պահելու: Այդ օրը հրեաները բացարձակապես ոչ մի գործ չէին կատարում, որովհետև Տերը նույնպես 7-րդ օրը հանգստացել է: Անշուշտ, Քրիստոսի մարդեղությամբ և փրկագործությամբ այս քարացած օրինապաշտությունը նոր կյանք ու լրացում է ստանում մարդկության կյանքում, երբ մենք սուրբ ենք պահում 7-րդ օրը՝ կիրակին՝ մասնակցելով Սուրբ Պատարագի: Սակայն մարդկությունը վաղուց որդեգրել և հասկացել է հանգստի կարևորությունը՝ կյանքի բնական ռիթմը պահպանելու, աշխատանքից բացի՝ նաև կյանքի այլ ոլորտների՝ հոգևոր պահանջմունքներին, ընտանիքին, մտերիմներին և այլոց, ժամանակ հատկացնելու անհրաժեշտությունը:

Հետաքրքրական է՝ միայն շաբաթ օրվա վերաբերյալ պատվիրանը չէ, որ Հին Կտակարանում Աստված տալիս է հրեաներին՝ կապված հանգստի հետ: Գոյություն ունի նաև շաբաթ տարվա և հոբելյանական տարվա գաղափարը: Աստված պատգամում է հրեաներին, որ հողը մշակեն վեց տարի, իսկ յոթերորդ տարին այն հանգիստ թողնեն (Ելք 23:10—11): Սա խոսում է այն մասին, որ աստվածային սկզբունքը տարածվում է ոչ միայն մարդկության, այլև ողջ բնության վրա: Իսկ յոթ շաբաթատարիներից հետո՝ 50-րդ տարին, հռչակվում է Հոբելյանական տարի: Այն նաև հայտնի է որպես ազատագրման տարի, որի ընթացքում հողերը վերադարձվում էին իրենց տոհմական տերերին, պարտքերը ներվում էին, իսկ ստրուկները՝ ազատ արձակվում (Ղևտ. 25:8—17):

➥ էջ 8

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ և արվեստում

« ....ես՝ իբրև Աւետարանի աշակերտ, ձեզ միայն մի բան կը կտակեմ, այն է՝ «սիրեցէք զմիմեանս», այսինքն՝ իրարու սիրեցէք: Եթէ ճշմարիտ աւետարանական սիրով զիրար սիրէք, էլ ձեզ ոչինչ չի պակսիր, մանաւանդ օտարութեան մէջ շատ աւելի պէտք ունինք իրար սիրելու.... Սիրելիներ, ցանկացայ վերջին անգամ ևս ձեզ հետ խօսել, ձեզ Աւետարան բացատրել, բայց կարճ և երեք տառերով պիտի ասեմ, ինչ որ Աւետարանի ընդհանուր բովանդակութիւնն է, այն է՝ «սէր», այո՛, Աւետարան ամբողջ իւր մէջ սէր է բովանդակում, զի Աստուած սէր է.... Եթէ կան ձեր մէջ անբաւականութիւններ, հեռացրէք ձեզանից այդ ոգին, իրարու հետ սիրով և խաղաղութեամբ ապրեցէք, և պիտի տեսնաք, որ երջանիկ պիտի լինիք»:

Մկրտիչ Ա Վանեցի

Վասպուրականի արծիվը՝ Խրիմյան Հայրիկը (Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի, աթոռակալել է 1892—1907 թթ.), ոչ միայն ականավոր հոգևորական գործիչ էր, այլև ջերմ ու անմնացորդ հայրենասիրության, մաքառող զինվորյալի, ազգային ինքնագիտակցության բոցավառ ոգու պահապան վահանի, լուսավորության քարոզչի ու պաշտպանի կենդանի խորհրդանիշ: Նա հայ մշակույթի ու ազգային կյանքի երևելի ներկայացուցիչներից է, բարձրաստիճան հոգևորական, հրապարակախոս, մեծ մանկավարժ և կրթական գործի հմուտ կազմակերպիչ: Նրա ամբողջ կյանքն անմնացորդ նվիրում էր հոգևոր-եկեղեցական, կրթալուսավորչական, ազգային և հասարակական-քաղաքական գործին:

Վանի Այգեստան քաղաքամասի Հայնկույսներ թաղամասում ծնված այս հզոր ազգային-հոգևորական գործիչն ու լուսավորչահիմն Մայր Աթոռի 125-րդ գահակալն իր ուղին սկսեց ու կյանքի հետագա ամբողջ ընթացքում ուղենիշ ունեցավ «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց» (Հովհ. 10.11) ավետարանական խոսքերը, որոնք դարձան նրա փոթորկահույզ, մրրկածուփ կյանքի անխախտ նշանաբանը: Նրա քարոզները ազգային կրթության, հասարակական լայն զանգվածների լուսավորության և հայրենասիրական դաստիարակության ուսանելի դասեր ու հոգեցունց կոչեր էին: Խրիմյան Հայրիկը կարողացավ ստեղծել իսկական ազգային դպրոցներ և դաստիարակել ազգային բարձր ինքնագիտակցությամբ օժտված, համամարդկային ու ազգային անանց արժեքներ կրող և գիտելիքներով զինված սերունդ, որը բանիվ և գործով նվիրվեց հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրական գաղափարին ու գործին:

Խրիմյան Հայրիկի կյանքի ամենահուզիչ դրվագներից էր Բեռլինի կոնգրեսից նրա վերադարձը, երբ նա իր հանճարեղ պատգամով հայ ժողովրդին տվեց «Երկաթե շերեփի» հավերժ արդիական ու խրատական դասը: Նա ցույց տվեց, որ հայը պետք է ունենա «երկաթե շերեփ»՝ ապավինելով միայն ու միայն սեփական բազկի զորությանը, դրսևորի անկոտրում կամք ու միասնականություն, լինի հաստատակամ ու պահանջատեր, որպեսզի կարողանա ազատագրել սուրբ հայրենիքն ու պաշտպանի սեփական իրավունքները: Միաժամանակ, նա պայքարում էր պանդխտության դեմ, որի հետևանքով հայաթափ էր լինում սրբազան բնօրրանը՝ Արևմտյան Հայաստանը: Խրիմյանը հռչակեց, որ ճշմարիտ հայրենասիրությունը «բուն հայրենեաց երկրին մէջ բնակուիլն է»: Նա կոչ էր անում հայորդիներին՝ վերադառնալ և շենացնել հայրենիքը՝ նախնիներից ժառանգության ստացած «փշալից դաշտերը» գերադասելով օտարության «ծաղկալից բուրաստաններին»:

Թեև Խրիմյանի կաթողիկոսության շրջանը սպառնալիքներով ու վտանգներով առլեցուն մի ժամանակաշրջան էր, այնուամենայնիվ, շրջահայաց ու հեռատես Հայրիկը կարողացավ բարեհաջող առաջնորդել ժողովրդին, նույնիսկ ժամանակ գտավ վերակառուցման, բարեկարգման ու գրական-ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու և մնայուն գործեր կյանքի կոչելու համար: Մկրտիչ Ա Վանեցին թողել է հարուստ գրական ժառանգություն, ուր առանձնահատուկ տեղ են գրավում գեղարվեստական, կրոնափիլիսոփայական, բարոյախրատական, մանկավարժական բնույթի ստեղծագործությունները: Խրիմյան Հայրիկի հեղինակած գործերը մեր ազգային-հոգևոր գանձարանի ոսկե ֆոնդի խիստ ինքնատիպ, արժեքավոր մեկ բույլն են կազմում: Դրանք են. «Հրաւիրակ Արարատեան» (Կ. Պոլիս, 1850 թ.), «Հրաւիրակ երկրին Աւետեաց» (Կ. Պոլիս, 1851 թ.), «Մարգարիտ արքայութեան երկնից» (Կ. Պոլիս, 1866 թ.), «Յիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Ժամանակ և խորհուրդ իւր» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Վանգոյժ» (Կ. Պոլիս, 1877 թ.), «Հայգոյժ» (Կ. Պոլիս, 1871 թ.), «Թագաւորաց ժողով» (Էջմիածին, 1909 թ.), «Դրախտի ընտանիք» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Սիրաք և Սամուէլ» (Կ. Պոլիս, 1878 թ.), «Պապիկ և թոռնիկ» (Էջմիածին, 1894 թ.) և այլն:

Խրիմյան Հայրիկը մեծ է առաջին հերթին իր բարոյական նկարագրով, պարզ ու շիտակ, արդարամիտ, ժողովրդասեր ու հայրենանվեր էությամբ: Ուղենիշ ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի տեսակետով» նշանաբանը՝ նա արժանիորեն վաստակեց համայն հայության կողմից պաշտելի, լուսապսակով զարդարված գործչի համբավ և «Հայոց Հայրիկ» պատվատիտղոսը: Հարազատ ժողովրդի ճակատագրով մտահոգված՝ նա նույնիսկ կյանքի վերջին օրերին չէր դադարում «ես եմ հովիւն քաջ» լինելուց և իր պարտքը կատարելուց: Սեփական ժողովրդի վիշտ ու ցավով ապրող, նրա ճակատագրով տառապող Ամենայն Հայոց Հայրիկն իր հոգնաբեկ ու վշտակոծ հոգին ավանդեց 1907 թ. հոկտեմբերի 29-ին: Որբացավ հայ ժողովուրդը՝ կորցնելով իր պաշտելի Հայոց Հայրիկին: Նրա սրբավայել մարմինն ամփոփված է Մայր Տաճարի զանգակատան հարավարևմտյան կողմում: Հայոց Հայրիկի շիրիմը դարձել ու այսօր էլ շարունակում է ուխտավայր մնալ յուրաքանչյուր հայրենասեր հայորդու համար: Թող Խրիմյան Հայրիկի անմահ ոգին, ուսանելի պատգամները, խրատական խոսքն ու կտակը միշտ և հանապազ լինեն մեր սրտերում՝ իբրև ուղենիշ և առհավատչյա աննկուն, ազատատենչ ոգու, բարի կամքի, ճշմարիտ քրիստոնյայի, մաքրամաքուր հավատի և հայրենիքին անմնացորդ նվիրումի:

Հայոց Հայրիկի մասին շատ է խոսվել ու գրվել, նրա բովանդակալից, փոթորկահույզ կյանքի ու գործի, մարդկային կերպարի մասին հյուսվել են երգեր ու լեգենդներ, գրվել հուշագրություններ ու պատումներ, կատակներ ու սրամտություններ:

Ամենայն Հայոց Հայրիկը Ամենայն Հայոց Բանաստեղծի անզուգական մտերիմներից էր, որին նվիրել է գեղարվեստական չորս ստեղծագործություն՝ «Հայ ուխտավորին» (1893 թ.), «Կաղնի» (1896 թ.) բանաստեղծությունները և «Երկու հայր», «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» (1907) արձակ երկերը, որոնք գրվել են Խրիմյանի մահվան առիթով:

«Հայ ուխտավորին» բանաստեղծությունը Թումանյանը գրել է Մկրտիչ Խրիմյանի՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին կաթողիկոս օծվելու առիթով: Բանաստեղծության մեջ երիտասարդ Թումանյանը շատ-շատերի նման արտահայտել է իր բաղձանքներն ու հույսերը, որոնք կապել է ազգընտիր Հայրիկի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալու հետ.

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,
Երանի՞ քեզ, հա՛յ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Արարատ....

Բանաստեղծության գրության շարժառիթի մասին բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը հիշում է հոր հետևյալ խոսքերը. «Հայ ուխտավորին» էքսպրոմտ է: Խրիմյանի ընտրության առթիվ չորս հոգի քեֆ սարքեցինք Օրթաճալայում, էն քեֆին գրեցի» (տես *Ն. Թումանյան,* Հուշեր և զրույցներ, էջ 240): Թումանյանի համակրանքն ու գնահատանքը Խրիմյան Հայրիկի՝ որպես ազգային, քաղաքական ու հասարակական գործչի և Հայոց հոգևոր առաջնորդի նկատմամբ անփոփոխ մնացին մինչև վերջ: Նույն բանաստեղծության մեկ այլ տարբերակում կան Հայոց Հայրիկին նվիրված այսպիսի տողեր.

....Սիրուն է տեսքն էն լըճակին,
Տաճարը սուրբ, լյառն ահագին,
Բայց ավելի մեծ ու շքեղ
Արծիվ հայրիկ ունենք էնտեղ,
Ճերմակահեր և հոգեհուր,
Հսկայատիպ կանգնած ամուր,
Ինչպես կաղնին Լիբանանի,
Որ հողմերին ծաղր կանի,
Էնտեղ արթուն կանգնել է նա
Լուսավորչի շիրմի վրա,
Բազուկն հպարտ հենել կողքին,
Կանգնել է մեծ ու ահագին,
Ու արծվի աչքերն հընոց
Սևեռել է կողմերն Հայոց,
Կողմերն Հայոց ու շատ հեռուն,
Դիտե ցրված իր ձագերուն....

Խրիմյան Հայրիկին ձոնված՝ Թումանյանի հաջորդ բանաստեղծությունը «Կաղնի»-ն է: Կաղնու այլաբանական պատկերով բանաստեղծն իր դրվատանքն է արտահայտել Խրիմյան Կաթողիկոսի նկատմամբ: Բանաստեղծությունը մակագրված է պոետի մտերիմ բարեկամ իշխանուհի Մարիամ Թումանյանին.

Անտառի միջին բարձրանում էր մի
Հաստաբուն հսկա — ծերունի կաղնի:
Երկինքը բոցոտ շանթ ու կայծակով
Այրել էր նրա բունը շատ անգամ:
Եվ փոթորիկը յուր սառը զարկով
Զարկում էր անդուլ, սուլում չարակամ....
Բայց նա միշտ կանգուն, նա միշտ աննկուն
Հուսով նայում էր ամպած երկնքին.....

Հ. Թումանյանը 1895 թ. նոյեմբերին Մկրտիչ Խրիմյանի հետ անձամբ ծանոթացավ և առավել բարձր գնահատեց Հայոց Հայրիկի ազգային-հասարակական գործունեությունը և մարդկային վեհ նկարագիրը: Հայոց Հայրիկի նկատմամբ Հ. Թումանյանի ակնածանքի և առանձնահատուկ վերաբերմունքի վկայություն են նաև «Երկու հայր» և «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» արձակ գործերը: Խրիմյանի՝ որպես Ամենայն Հայոց Հայրիկի դիմանկարի պատկերակերտման ուշագրավ հուշ-ակնարկ է «Երկու հայր» ստեղծագործությունը: Համիդյան ջարդերից փրկված, սակայն ամբողջ գերդաստանը կորցրած մի ապաբախտ ու վշտալի քահանա գալիս է Ամենայն Հայոց Կաթողիկոսի մոտ՝ իր վիշտը հայտնելու. կոտորածների ժամանակ նա կորցրել էր հարազատներին՝ 20 հոգու: Հայրիկը ծով համբերությամբ լսում է նրան, ապա ասում, որ իր կորցրածը շատ ավելին է՝ ավելի քան 20 հազար: Հայ ժողովրդի բոլոր կորուստները նրանն են, դրան գումարած՝ քահանայի ընտանիքը: Եվ կաթողիկոսը խնդրում է քահանային մոտենալ իրեն, ձեռքը դնել Հայրիկի գլխին ու օրհնել՝ այդ անդառնալի կորստի ցավին դիմանալու.

«....— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրի՛կ, ես... այնպես, եկել եմ... եկել եմ... Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...



Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում: Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, տե՛ր Սարգիս,— գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրի՛կ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար,— պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

— Հայրիկինը...

— Դե ելի՛ կ, տեր Սարգիս, մո՛ւտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթի՛ր, օրհնի՛ր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին...

Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը...»:

Այս սրտառուչ գրվածքի ավարտը թեև մի քիչ անսպասելի է, բայց հայոց ողբերգությանը շատ բնորոշ: Պատմվածքի ստեղծման ստույգ թվականը հայտնի չէ: Գրականագետները հավանական են համարում, որ այն գրված լինի մոտավորապես 1907 թվականին՝ Խրիմյան Հայրիկի մահվան առիթով: Ըստ թումանյանագետ Արամ Ինճիկյանի՝ գրության հավանական թվականը 1895-ն է՝ նոյեմբերի վերջը կամ դեկտեմբերի սկիզբը, իսկ տեղը՝ Էջմիածինը: Դա այն ժամանակ էր, երբ Թումանյանը կատարում էր մի երկար ուղևորություն՝ «Բորժոմ—Ախալցխա—Ախալքալաք, Ալեքսանդրապոլ—Կարս—Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա—Դիլիջան—Երևան—Էջմիածին ուղեգծով: Այդ ուղևորության ընթացքում էլ հավանաբար Թումանյանը կամ ականատես է եղել պատմվող դեպքին, կամ լսել ու գրի է առել (տես *Ա. Ինճիկյան,* Հովհաննես Թումանյան: Կյանքը և ստեղծագործության պատմությունը. 1869—1899, Երևան, 1969, էջ 371, 373):

Հ. Թումանյանի՝ Խրիմյան Հայրիկին նվիրված հաջորդ գործը «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» հուշագրական պատմվածքն է: Այս գործի ստեղծման ստույգ թվականը ևս հայտնի չէ (գրականագետները հավանական են համարում 1907-ը): Խրիմյանի հետ բարեկամական ջերմ հարաբերություններ ունեցած բանաստեղծը Հայրիկի մեկ օրվա (ավելի ճիշտ՝ մի քանի ժամվա) կենսակերպի նկարագրությամբ կերտել է նրա կենդանի դիմանկարը՝ խոսքի՝ իրեն բնորոշ դիպուկ ու արտահայտիչ վրձնահարվածներով, սիրով ու հումորախառն: Պատմվածքում Հայրիկին այցելում են թուրքական հայաջինջ քաղաքականությունից մազապուրծ, ծանր պայմաններում հայտնված, ծայրահեղ թշվառության ու աղքատության շեմը հատած մարդիկ՝ ուսումնարանի աշակերտ, գաղթական կին, ծեր հոգևորական, և Հայոց Հայրիկը անսահման սրտացավությամբ ու ծով համբերությամբ բոլորին լսում է, բոլորի խնդրանքները կատարում, բոլորին օգնում: Թումանյանը հրաշալի ըմբռնմամբ է զգացել Հայրիկի խռովահույզ հոգու տվայտանքն ու տառապանքը, որովհետև դա նաև ի՛ր ու համայն հայության ցավն ու ողբերգությունն էր: Նրանք երկուսն էլ վեր էին անձնական ցավից, երկուսի սրտում հայոց անհատակ վիշտն էր ծփում, երկուսը նաև զվարճալի դեպքեր էին պատմում և այնպես սրտալի ծիծաղում, որ միայն իրենք կարող էին. «Խրիմյան Հայրիկը Թիֆլիս գտնված ժամանակ մի օր կանչել էր սովորականի նման զրույց անելու թե իր գրած ոտանավորները կարդալու: Պետք է ասեմ, որ շատ էր սիրում ոտ<անավոր> գրելը և իրեն նշանավոր բանաստեղծ էր համարում:

— Գիշերները քունս չի տաներ,— ասում էր,— սենյակում կշրջեմ, կծխեմ ու կգրեմ:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

Մայր Տաճարի զանգակատան ներքո ամփոփված երկու հայրապետները

← էջ 2

Հարգանքով դիմելով պապին՝ նա լրջորեն քննադատում է լատին քարոզիչների արածը՝ առաջարկելով. «....նոցա թուղթ առաքեա ի ձեռս մեր, և մեք ցուցցուք պատրոցն, թերևս կասեսցին յատելութենէ քրիստոնէից» (Ազգապատում, հտ. Բ, սիւնակ 3205): Նամակում միաժամանակ գրում է որ պապին վայել չէ, որ «զՀայս հերետիկոս դատապարտես», քանի որ «սրբազան անուան տեառնդ ոչ է վայելուչ այնպիսի իրականութիւն»:

Ալեքսանդր Հայրապետն իր օրհնությունն է բերել հայ ազատագրական պայքարի մեծ նվիրյալ Իսրայել Օրուն: 1709 թ. Օրին Սուրբ Էջմիածնում հանդիպում է Ալեքսանդր Կաթողիկոսի հետ և ներկայացնում իր ծրագիրը: Հայոց Հայրապետը հավանություն է տալիս նրա ձեռնարկներին, ինչից հետո վերջինս շարունակում է իր ճանապարհը: Իսրայել Օրին իր հետ վերցրել էր նաև Ալեքսանդր Կաթողիկոսի օրհնության գիրը՝ ուղղված Ռուսաց Պետրոս Առաջին ցարին: Գրության մեջ հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքներն է ուղղում. «Շնորհազեղուն և աստվածապարգև օրհնությունից հետո, սիրառիթ այս նամակով թող հայտնի լինի Ձեզ՝ վերոգրյալ Պետրոս Ալեքսեևիչիդ, որ մեր այս սիրելի որդին՝ Իսրայել անունով դեսպանը, հանդիպեց սուրբ քրիստոսաէջ աթոռը: Մենք նրան սիրով և մեծ ուրախությամբ ընդունեցինք ու չափից ավելի սեր և ընդունելություն ցույց տվեցինք: Նա ամենայն մանրամասնությամբ պատմեց մեզ հրամանոցդ որպեսությունը և մեր ժողովրդի նկատմամբ ունեցածդ սերը» (*Ա. Աբրահամյան*, Իսրայել Օրի, Երևան, 1978, էջ 111):

Ալեքսանդր Ա Հայրապետը թողել է նաև հարուստ մատենագրական ժառանգություն: Ինչպես Մաղաքիա արք. Օրմանյանն է գրում, «Աղեքսանդր թէ հմուտ անձ մը եղած է և թէ բուռն պաշտման հայադաւան ուղղափառութեան» (Ազգապատում, հտ. Բ, սիւնակ 3184): Նա եղել է հայադավան ուղղափառության ջերմ ջատագով. սրա վառ ապացույցն է նրա «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» աշխատությունը, որը գրել է 1682 թ. (լույս է տեսել 1687 թ. Նոր Ջուղայում): Գիրքն ունի հինգ գլուխ, որտեղ հերքվում է քաղկեդոնականության առաջ բերած երկբնության խնդիրը, և պաշտպանվում՝ Հայ Եկեղեցու վարդապետությունը: Նրա գրչին է պատկանում նաև «Աղոթամատույց» գրքույկը, որ լույս է ընծայվել ավելի ուշ՝ 1790 թվականին: Այս երկում ներկայացված է Սուրբ Պատարագի իրերի և արարողությունների մեկնությունը:



Ալեքսանդր Ա Ջուղայեցին վախճանվել է 1714 թ. նոյեմբերի 22-ին՝ կաթողիկոսական գահակալության ութերորդ տարում: Երանաշնորհ Հայրապետի մարմինն ամփոփվեց զանգակատան ներքնահարկում՝ Մայր Տաճարի գլխավոր մուտքի հյուսիսային կողմում: Երանաշնորհ Հայրապետի գերեզմանի մարմարյա սալին հետևյալ տապանագիրն է. «Վախճանեցաւ Տէր Աղէքսանդր Կաթողիկոս Ամենայն Հայոց և եդաւ յայսմ դամբարանի.... յիշել զձեզ աղաչէ, ով հանդիպողօք բարի, նոյեմբերի ԻԲ/22» (*Արսեն Հարությունյան*, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 2016, էջ 126):

* * *

Մինաս Ա Ակնեցի Կաթողիկոսի (1751—1753) մահվանից հետո Հայոց հայրապետական գահի թեկնածուներից էր Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանը, սակայն վերջինս մերժում է կաթողիկոսական գահակալի առաջարկությունը: Մյուս թեկնածուներն էին Ալեքսանդր Քարաքաշը և Սահակ Ահագինը: 1753 թ. հունիսի 22-ին՝ Կ. Պոլսում տեղի ունեցած ժողովի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Ալեքսանդր Քարաքաշը: Նորընտիր հայրապետը 1753 թ. հոկտեմբերին 14-ից դուրս է գալիս Կ. Պոլսից և միայն 1754 թ. մարտի սկզբին հասնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հասնելուց մի քանի օր անց՝ մարտի 7-ին՝ Տնտեսի կիրակիի օրը, ստանում է կաթողիկոսական օծում: Նրա՝ կաթողիկոս ընտրվելու և օծվելու մասին կարդում ենք իր իսկ գրած հիշատակարանում. «Թուին ՌՄԲ / 1753 յունիսի, ԻԲ/22 ի Պոլիս մեծ քաղաքն որ կոչի Ըստամպոլ բազմամարդ եկեղեցի Սուրբ Աստուածածին ուր Պատրիարքարանն է կոչեցին զիս նուաստս իբրու լինել Ամենայն Հայոց կաթուղիկոս բոլոր իշխանքն և ժողովրդոք… յաւուր տնտեսի կիւրակէին օծեցին զանարժանս Կաթուղիկոս Ամենայն Հայոց և տնտես ազգիս արամեան» (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ է):

Ալեքսանդր Բ Կաթողիկոսի մասին տեղեկությունները ևս խիստ սակավ են: Ծնվել է Կ. Պոլսում: Մինչև կաթողիկոս օծվելը՝ հիշվում է որպես նվիրակ Եդովկիայում: Վերջինս Աբրահամ Գ Կրետացի Կաթողիկոսի օրոք եղել է աթոռակալ: Մանկությունից ծառայել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, սակայն Պետրոս վարդապետ Քյութուրի հետ Ղազար Ա Ջահկեցի Կաթողիկոսի կողմից հալածանքների է ենթարկվել և հաստատվել Կ. Պոլսում՝ իր ծերության օրերը հանդարտ անցկացնելու համար: Սակայն հակառակ իր պատկառելի տարիքին և ցանկությանը՝ ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը նրա մասին հիշատակում է. «....որ էր այր հեզաբարոյ և պարզամիտ և բազմաշխատ, որդի և բնիկ Սրբոյ Աթոռոյս»: Եվ ունի զբարերարութիւնս բազումս ի Սուրբ Աթոռս ի մանկութենէ (Ջամբռ, էջ 75): Մաղաքիա արք. Օրմնայանը ևս գնահատանքով նշում է. «....և եթէ տարիքին պատճառաւ հնար չէր իրմէ երկարատև և բազմարդիւն պաշտօնավարութիւն սպասել, գոնէ կաթողիկոսական աստիճանը արդար վարձատրութիւն էր իր նախկին արդիւնաւորութեանց, և կրած տառապանաց ու տանջանաց»:

Ալեքսանդր Բ Բյուզանդացի Կաթողիկոսն ունեցել է Քարաքաշ մականունը: Այս մականունն ամենայն հավանականությամբ ստացել է սև, թավ հոնքեր ունենալու կամ էլ չարքաշ, տաժանակիր կյանքով ապրելու պատճառով, թեպետ կա նաև կարծիք, ըստ որի՝ գերդաստանի անունն է, քանի որ Կ. Պոլսում Կարապետ Քարաքաշյան անունով բանասերն իրեն Ալեքսանդր Բ Կաթողիկոսի ցեղից է համարել (*Մանվել սրկ. Սարգսյան*, Հայ հոգևորականների պատվանունների և մականունների բացատրական բառարան, Ս. Էջմիածին, 2018, էջ 63):

Ծերունազարդ հայրապետը վախճանվեց 1755 թ. նոյեմբերի 11-ին՝ Հրեշտակապետաց տոնի օրը՝ աթոռակալելով ընդամենը մեկ ու կես տարի: Նրա մարմինն ամփոփված է զանգակատան ներքնահարկում՝ Մայր Տաճարի գլխավոր մուտքի հարավային կողմում: Երանաշնորհ հայրապետի գերեզմանի մարմարյա սալին հետևյալ չափածո տապանագիրն է. «Քրիստոս Որդի Հօր Միածին դատող բնութեանս մեր մարդկային յորժամ փառօք գայցես կըրկին, յիշեա ողորմութեամբ քոյին զՀայրապետն մեր զհոգելին, զՏէր Աղէքսանդր Բիւզանդացին, արժանացո սրբոց գընդին, յարքայութիւնդ մոյծ երկնային, որ արդ հանգեաւ ըստ Քում բանին, աստէն եդաւ մարմին նորին, հազար և յերկերիւր յամին, չորրորդ ևս ընդ սըմա բարդին, նոյեմբերի մետասանին» (*Արսեն Հարությունյան*, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 2016, էջ 125—126):

Մաղաքիա արք. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխատության մեջ հիշատակում է, որ 1888 թ. մայիսին Սուրբ Էջմիածնի ներքին բակում շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ անհրաժեշտություն առաջացավ Ալեքսանդր հայրապետների գերեզմաններն ավելի խորն իջեցնելու: Մակար Ա Թեղուտցի Կաթողիկոսի հրամանով՝ նա Ներսես եպիսկոպոս Խուդավերդյանի և Մամբրե եպիսկոպոս Սանասարյանի հետ մասնակցել է «անոնց ոսկորներուն օրինաւոր զետեղման և շիրիմներուն կանոնաւորապէս փակուելուն» (Ազգապատում, հտ. Բ, սիւնակ 3452):

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Հանգիստը որպես հոգևոր կյանքի անբաժան մաս

← էջ 6

Այս օրենքը հիշեցնում է նրա, որ ամեն ինչ, որ մեզ Աստված տալիս է անգամ մեր աշխատանքի միջոցով, էությամբ պատկանում է ոչ թե մեզ, այլ Աստծուն, իսկ մենք ընդամենը մշակներ ենք, որ ժամանակավորապես պատասխանատու ենք այդ ողջ նյութական բարիքների տնօրինման համար: Աշխատանքը ոչ թե ինքնանպատակ սկզբունք է, այլ միջոց՝ Աստծուն փառավորելու, Նրա արարչագործությունը շարունակելու:

Մեր օրերում հսկայական աճ են գրանցել հնարավորությունները, որոնց շնորհիվ մարդիկ կարող են աշխատել, արարել, ինքնահաստատվել որևէ ոլորտում: Աշխատանքն այսօր դարձել է մի կողմից՝ նյութապես ապահովված լինելու, աղքատությունից խուսափելու և բարեկեցիկ կյանք կառուցելու միջոց, մյուս կողմից՝ սեփական հնարավորությունները բացահայտելու, իրացնելու և զարգանալու հրաշալի գրավական: Սակայն այս ամենն ունի իր մութ կողմը ևս: Տեղեկատվական դաշտում՝ հատկապես համացանցային սոցիարթակներում, գերակա դիրք է զբաղեցնում այն տեղեկությունը, որը քարոզում է աշխարհիկ հաջողակության, անհատական ձեռքբերումների՝ միմիայն նյութականացված գաղափարները: Համատարած սպառողական մշակույթի պատճառով հասարակության անդամների շրջանում արմատացել է անհատական նվաճումները, նյութական հնարավորությունները ի ցույց դնելու, դրանով կարծես ինքնագոհ դառնալու ցանկությունը: Աշխատանքն ու նյութական բարիքների սպառումն այդպիսով դառնում են ինքնանպատակ. այնտեղ տեղ չունի անձի հոգևոր աճը, այնտեղ չկա այն զգացումը, որ այս ամենը պատկանում է ոչ թե մեզ, այլ Աստծուն: Աշխատանքը կուռք դարձնելը վտանգում է ոչ միայն հոգևոր կյանքը, այլև ֆիզիկական գերբեռնվածություն է առաջ բերում, որի հետևանքով մարդիկ ավելի քիչ են բավարարված լինում իրենց կյանքից, ավելի շատ են աշխատում և ավելի պակաս վայելում: Սրան գումարած՝ գերծանրաբեռնվածությունը զերծ չէ մարմնական առողջությանը հասցնող վնասներից: Այս ամենն արդեն խորթ են քրիստոնեական արժեհամակարգին, աշխատանքի ու նյութական միջոցների քրիստոնեական ընկալմանը:

Հիսուս Քրիստոս գեղեցիկ համեմատությամբ մեզ ուսուցանում է՝ կյանքի առաջնային նպատակ չդարձնել միմիայն աշխատանքն ու առօրյա հոգսերի բավարարումը. «Նայեցեք երկնքի թռչուններին. ո՛չ վարում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ հավաքում. և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք ավելին եք, քան նրանք» (Մատթ. 6:26): Քրիստոնյայի աշխատանքը և ընդհանրապես առօրյա հոգսերը պետք է լցված լինեն Աստծո հանդեպ հույսով ու հավատով, իսկ կյանքի կենտրոնը պետք է լինի Քրիստոս և ոչ այս աշխարհն ու իր բարիքները:

Այս ամենը ևս մեկ անգամ զգաստության, մեր ապրած կյանքին կողմնակի հայացք ձգելու և մեր առօրյան վերարժևորելու կոչ է մեզ: Քրիստոնյայի կյանքի կարևորագույն սկզբունքը կյանքն ամբողջովին որպես Աստծո պարգև ընդունելն է, այլ ոչ թե կյանքը բաժանելը երկու ժամանակահատվածի միջև՝ ժամանակ, երբ աշխատում ենք, և ժամանակ, երբ հանգստանում կամ վայելում ենք: Աշխատել՝ հանգստանալով, և հանգստանալ՝ աշխատելով. այս միջոցով է, որ կյանքում կարող ենք ապահովել հավասարակշռություն և ներդաշնակություն նյութականի ու հոգևորի, հոգսերի ու բավականության միջև:

Հանգստի իրավունքն աստվածատուր շնորհ է: Ի վերջո, մենք բոլորս ծնվում և ապրում ենք տարատեսակ հոգսերով բեռնավորված անհանգիստ աշխարհում, և մեր հոգին, որ Աստծո պատկերն է կրում իր մեջ, ձգտում է հանգստի առ Աստված: Օգոստինոս Երանելին գրում է. «Մեր սրտերն անհանգիստ են, մինչև որ հանգիստ չեն առնում Աստծով»: Այսպիսով՝ առօրյայից, կենցաղից, աշխատանքից ուշադրությունը որոշ ժամանակով կտրելը և լիովին առ Ներաշխարհ, առ Աստված դառնալը կարևորագույն գործողություն է քրիստոնյայի հոգևոր կյանքի համար: Մեր եկեղեցին կոչ է անում կիրակին նվիրել Աստծուն՝ Սուրբ Պատարագին հաղորդակցությամբ, Աստծո խոսքի ունկնդրությամբ և աղոթքով անցկացնելով:

Վերջապես, որպես քրիստոնյաներ՝ կարևոր է մտապահել հետևյալը.

- Աստված Ինքը հանգստանում էր:
- Աստված մեզ ևս պատգամում է հանգստանալ:
- Աշխատանքից հանգիստը Աստծուն և հոգևոր կյանքին ժամանակ տրամադրելու համար անհրաժեշտ նախապայման է:

Այս սկզբունքների որդեգրումը աշխատանք—հանգիստ հավասարակշռության պահպանման լավագույն տարբերակն է բոլորիս համար:

Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ
Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 14.11.2025 թ.
Տպաքանակը՝ 1265